

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Ի**մ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տասնամյա ծառայության ընթացքում ես ելույթներով հանդես եմ եկել աշխարհի մի քանի տասնյակ մայրաքաղաքներում, ավելի քան 150 միջազգային ու ակադեմիական հավաքներում ու խորհրդաժողովներում: Որպես հինավուրց ժողովրդի ներկայացուցիչ, որը նորաստեղծ պետականություն ունի, ես ամբիոն բարձրանալու այս առիթներից յուրաքանչյուրը դիտարկել եմ որպես մեզ տրված հնարավորություն՝ պատմության առարկայից կամ վկայից վերածվելու մասնակցի ու դերակատարի համաշխարհային պատմության կերտման գործում: Այս ելույթների հավաքածուն արտացոլում է այդ հավակնությունը և փաստագրում է Հայաստանի արտաքին քաղաքականության էվոլյուցիան:

Ես համոզված էի, որ մինչ միջազգային հանրությունը հետևում ու վերլուծում էր նոր աշխարհակարգի ձևավորումը և փորձում առաջընթացի համար ուղենիշներ ընտրել, մենք պետք է ներկայացնեինք խնդիրների վերաբերյալ մեր սեփական տեսանկյունը, մեր սեփական փորձը, մեր նպատակների ու սահմանափակումների վերաբերյալ մեր մեկնաբանությունները և կենտրոնանայինք մեզ վրա ազդեցություն գործող համաշխարհային իրադարձությունների վրա: Ես վստահ էի, որ դիմում եմ այն մարդկանց, որոնք ազդեցություն ունենին մեր զարգացման ու ապագայի կերտման վերաբերյալ կարծիքների ձևավորման ու քաղաքականության մշակման վրա: Ես խոսում էի լաված լինելու համար:

Ես նաև խոսում էի լաված լինելու համար աշխարհասփյուռ հայության կողմից: Հազվագյուտ են այն քաղաքները, որոնք հայազգի բնակչություն չունեն: Ավելի հազվագյուտ էին այն այցերը, որոնք

## *Վարդան Օսկանյան*

չէին ներառում հանդիպում հայկական համայնքի հետ, որը կարոտ էր և՛ իրատեսական, և՛ հուսադրող ուղերձի: Նրանք ժամանակի ու տարածության առումով հեռու էին Հայաստանից, այնուհանդերձ նրանց գոյությունն իսկ նորովի էր սահմանում Հայաստանը: Դիվանագիտական համայնքի հետ իմ աշխատանքի փորձից կարող եմ ասել, որ Հայաստանը բոլորովին այլ կերպ կընկալվեր, եթե չլիներ հսկայազանգված, տեսանելի ու ազդեցիկ սփյուռքը:

Ես այդ սփյուռքի մասն էի, երբ Հայաստանն անկախացավ 1991 թ. սեպտեմբերին: 1992 թ. մարտին, երբ ես ականատես եղա Միավորված ազգերի կազմակերպությունում անկախ Հայաստանի եռագույնի բարձրացմանը, ես արդեն գիտեի, որ իմ ապագան Հայաստանում է: Այդ ժամանակ ես ուսանող էի Իրավունքի և դիվանագիտության Ֆլեթչերի դպրոցում: Ավարտելով Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը, 1980 թ. ես մեկնել էի Թաֆթս համալսարան՝ շարունակելու իմ ուսումը ինժեներության մագիստրական ծրագրում:

Միրիայում ծնված ուսանողի համար, որը Խորհրդային Հայաստանի բարձրագույն հաստատության դիպլոմ ունի, ԱՄՆ-ում համալսարանական կրթության ծավալը, խորությունը, բարդությունն ու հրապուրանքը աննկարագրելի էին: Աշխարհը քաղաքական տեսանկյունից շատ հետաքրքիր էր դառնում, և դա մասնավորապես տեսանելի էր Բոստոնի ակադեմիական շրջանակներում:

Աշխարհի ամենահեղինակավոր կրթական հաստատությունների կողմից առաջարկվող քաղաքական ոլորտի ծրագրերն ու դրանցում հանդես եկող միջազգային ասպարեզի գործիչները մշտապես շեղում էին ուշադրությունս իմ ինժեներական մասնագիտությունից: Երկար չտևեց մինչ ես հանձնվեցի: Թաֆթսի ինժեներության դպրոցից հետո ես ընդգրկվեցի Հարվարդի համալսարանի կառավարման ուսումնասիրությունների ծրագրում, իսկ այնտեղից էլ գնացի Ֆլեթչեր: Աշխարհը փոխվում էր, և ես ուզում էի ինչ-որ տեղ, ինչ-որ կերպ այդ վերափոխումների մասը կազմել: Իմ կողմից ինժեներից քաղաքական գիտությունների անցումը տեղի ունեցավ ավելի վաղ, քան Հայաստանի համար անկախության որևէ նշույլ կարող էր նշմարվել:

1991 թ. անկախության ձեռքբերումը իմ հրճվանքը տագնապով շաղախեց: Առանց պաշարների, պետականության փորձից, բնական դաշնակիցներից զուրկ Հայաստանը՝ հսկայական պատմական ու աշխարհագրական սահմանափակումներով, վերջին շուրջ

հարյուր տարվա ընթացքում՝ առաջին, իսկ հազարամյակում՝ ընդամենը երկրորդ անգամ անկախ էր դարձել: Իմ երկիրն ազատ էր, բայց նրա անվտանգությունը երաշխավորված չէր:

Հայաստան տեղափոխվելը իմ կյանքի ամենահեշտ որոշումներից մեկն էր: Դա անգամ որոշում չէր, այլ ինքնաբերական գործողություն: Հայաստանում և Հայաստանից դուրս իմ կրթության, Հայաստանի մշակութային և մտավորական կյանքի հետ իմ հոր և ընտանիքի երկարամյա շարունակական կապերի շնորհիվ Հայաստանն ինձ համար միշտ տուն է եղել: Հիմա այն իսկապես իմ տունն էր դառնալու: 1992 թ. հունիսին, ուսումնա ավարտելուց հետո, ես ընտանիքիս հետ մեկնեցի Երևան և պաշտոն ստանձնեցի Արտաքին գործերի նախարարությունում:

## **ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Մեր արտաքին քաղաքական օրակարգը էական փոփոխություններ չի կրել մեր անկախության առաջին օրվանից ի վեր: Մեր ժողովրդի համար ֆիզիկական ու տնտեսական անվտանգության ձեռքբերումը, մոտավոր ու հեռավոր հարևանների հետ առավել խոր հարաբերություններ հաստատելու ձգտումը, Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ ու տևական կարգավորման հասնելը, Թուրքիայի հետ հարաբերությունների նորմալացումը, տարածաշրջանային համագործակցությունը, եվրոպական ինտեգրացիան, ինչպես նաև զինաթափման, ահաբեկչության դեմ պայքարի, գլոբալիզացիայի, մարդու իրավունքների ու ժողովրդավարության առաջ մղման համաշխարհային խնդիրները մինչ այսօր մեր առջև կանգնած մարտահրավերներ են:

Արտաքին քաղաքականությունը գործիք է ազգային նպատակների հասնելու և ազգային շահը պաշտպանելու համար: Ազգային շահը, սակայն, լայն հասկացություն է: Ժողովրդի անվտանգությունն ու բարեկեցությունը ապահովելը բոլոր երկրների ազգային շահից է բխում: Ազգերին զատում է ո՛չ այնքան այն, թե ինչպես են նրանք ընկալում ու սահմանում ազգային շահը, որքան այն, թե ինչ մարտավարություն, ռազմավարություն ու մեթոդներ են ընտրում այդ ազգային շահին հասնելու ու այն պաշտպանելու համար:

## *Վարդան Օսկանյան*

Ընտրելու, ճիշտ ընտրելու գործընթացն է, որի առջև կանգնում են քաղաքականություն մշակողները: Թեև ընտրության հնարավոր տարբերակները բազմաթիվ են, սակայն իրականները՝ նրանք, որ հաջողությամբ կպսակվեն կամ առնվազն չեն հարվածի ու վնաս հասցնի, սահմանափակ են: Այս սահմանափակումների չափը կախված է հիմնականում երկրի ներուժից ու կարողություններից:

Հայաստանի, ինչպես այլ երկրների պարագայում՝ աշխարհագրությունը, բնական պաշարների սակավությունը, փոքրաթիվ բնակչությունը, պատմությունն ու անգամ ազգային բնավորությունը մեծ դեր են խաղում: Դրանից բացի համաաշխարհային ու տարածաշրջանային մոտեցումները, ինչպես նաև երկրի դեկավարների ընկալումներն ու դիվանագիտական կարողություններն են, որ ազդեցություն են ունենում քաղաքական ընտրության վրա:

Այս ամենն առկա էին 1998 թ., երբ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի ու նրա մերձակա գործընկերների միջև աճող անձնական ու քաղաքական տարաձայնությունները հանգեցրեցին պարտադրված հրաժարականի: Թեև դեռևս շարունակվում են քննարկումներն այն հանգամանքների շուրջ, որոնք ստիպեցին նրան հրաժարվել իշխանությունից, արտաքին քաղաքականության խնդիրներն անկասկած վճռորոշ, եթե ոչ՝ հիմնական պատճառներն էին: Դրանց շարքում էին տարամետ մոտեցումները Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծման առումով:

Որևէ երկրում վարչակազմի բնական կամ հերթական փոփոխությանը հետևում է քաղաքականության թե՛ շարունակականություն, թե՛ փոփոխություն: Թեև 1998 թ. իշխանափոխությունը բնական չէր, ոչ էլ՝ կանոնավոր, դրա արդյունքում քաղաքականությունն այնուամենայնիվ շարունակականություն ունեցավ, բայց նաև կտրուկ փոփոխության ենթարկվեց որոշ տեղերում:

1998 թ., երբ Ռոբերտ Քոչարյանն ընտրվեց նախագահ, իսկ ես նշանակվեցի արտաքին գործերի նախարար, երկրի ներսում և դրանից դուրս տեղի ունեցող իրադարձությունները ինչ-որ տեղ արդեն ուրվագծել էին մեր քաղաքականության շրջանակները:

Միջազգային ասպարեզում իր ավարտին էր հասնում ռուս-ամերիկյան մեղրամիսը: Ռուսաստանն առավել հավակնոտ էր դառնում միջազգային հարաբերություններում և սկսել էր համաաշխարհային խնդիրներում իր դիրքորոշումները պաշտպանել: Մեր նման երկրի

համար այս փոփոխությունները նշանակում էին սահմանափակ ճկունություն և խուսանավելու նվազ հնարավորություններ Հայաստանին հատուկ արտաքին քաղաքականության իրականացման հարցում:

Տարածաշրջանային մակարդակում հակամարտությունները դեռևս ծխում էին ոչ միայն Լեռնային Ղարաբաղում, այլև Վրաստանում: Միջազգային հանրությունն ընդսմին առավել հստակ դիրքորոշում էր որդեգրել հակամարտությունների վերաբերյալ և արտահայտվել տարածքային ամբողջականության սկզբունքին նախապատվությունը տալու օգտին: Սրան էր Ադրբեջանը ձգտում ամենից առավել, որպեսզի արդարացնի իր հավակնությունները Ղարաբաղի հանդեպ, մի տարածք, որի հետ ո՛չ էթնիկական, ո՛չ կրոնական և ո՛չ էլ պատմական առնչություններ չունեն:

Ավելին՝ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան մավթատարի պայմանագիրը գրեթե կնքված էր: Սա ոչ միայն համարձակություն հաղորդեց Ադրբեջանին, այլ նաև ուժեղացրեց Թուրքիայի դերը տարածաշրջանում:

Ներքին կյանքում Հայաստանի տնտեսությունը սկսել էր ոտքի կանգնել: Այդուհանդերձ, հետխորհրդային անցման շրջանի հետևանքներն ամենուր էին: Ի լրումն սրա՝ մեկ այլ, ավելի խրթին անցում էլ էր կատարվում՝ առաջին նախագահական վարչակարգից երկրորդին:

Սա էր այն իրավիճակը, երբ ես նշանակվեցի արտգործնախարարի պաշտոնում: Անհրաժեշտ էր նախկինում արտաքին քաղաքականության մեջ կիրառվող մարտավարության, ռազմավարության ու մեթոդների լուրջ վերանայում ու վերագնահատում իրականացնել: Հստակ էր, որ շարունակականություն է պետք որոշ ոլորտներում: Մյուսները փոփոխություն էին պահանջում:

Ես կառանձնացնեի վեց քաղաքական մոտեցումներ, որոնք կամ նոր էին, կամ զգալիորեն տարբերվում էին նախկինում եղածներից՝ փոխլրացման քաղաքականությունը, շեշտադրումը բազմակողմ դիվանագիտության վրա, եվրոպական ինտեգրացիային վճռականորեն հետամուտ լինելը, Հայաստան-սփյուռք հարաբերություններում առավել ընդգրկուն մոտեցումը, հայ-թուրքական հարաբերությունների հարցում նոր մոտեցումը, և ամենատեսանելին՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծման հարցում տարբերվող ռազմավարությունը:

## *Վարդան Օսկանյան*

### **ՓՈԽԼՐԱՑՈՒՄ**

Հատկապես 2008 թ. օգոստոսին Կովկասում բռնկված ռուս-վրացական աննախադեպ ռազմական հակամարտության լույսի ներքո անհնար է գերազնահատել Կովկասում փոխլրացման քաղաքականության կարևորությունը: Մա ավելին է, քան հավասարակշռության կամ չեզոքության քաղաքականությունը: Մա առավելագույն ներգրավվածության և ամենալայն համագործակցության քաղաքականություն է:

1998 թ.՝ Քոչարյանի վարչակազմի առաջին օրերին, մենք ստիպված էինք վերանայել հավասարակշռության քաղաքականությունը, որով առաջնորդվում էր հանրապետությունն անկախության սկզբնական շրջանում: Միշտ էլ ակնհայտ է եղել, որ Հայաստանը կարող է և պետք է լավ հարաբերություններ ունենա երեք մեծ բևեռներից յուրաքանչյուրի՝ Եվրոպական Միության, Ռուսաստանի և Միացյալ Նահանգների հետ: Այնուամենայնիվ, նրանց միջև առկա երբեմն ընկալվող, երբեմն էլ քողարկված մրցակցությունը մեզ ստիպեց հավասարակշռել մեր գործողությունները և կապերը, ապահովելով, որ մի բնագավառում մեկի հետ ստեղծվող հարաբերությունները փոխհատուցվեն մյուսի հետ կապերով մեկ այլ բնագավառում: Մենք նախկինում մեզ համոզել էինք, որ սա հնարավոր չէ իրականացնել միևնույն բնագավառում՝ ելնելով բևեռների մոտեցումների հակասություններից և տարբերություններից: Քաղաքականության վերանայման պատճառներից մեկն էլ այս գերուժերից յուրաքանչյուրի աճող, թեպետ անխոս վրդովմունքն էր ամեն անգամ, երբ մենք չէինք ընդունում բացահայտորեն նրան աջակցող դիրքորոշում:

Թեև արձագանքը սովորաբար վրդովմունքից այն կողմ չէր անցնում և, հետևաբար, մեծ հետևանքներ չէր ունենում որևէ առանձին դեպքում, սակայն կուտակվող թյուրըմբռումները կարող էին հարված հասցնել հարաբերություններին, հատկապես՝ քաղաքականին: Այդ իսկ պատճառով մենք ստիպված էինք ելք գտնել նման կրկնվող բարդ իրավիճակներից՝ միևնույն ժամանակ պաշտպանելով մեր շահը: Մեզ նոր հասկացություն էր պետք՝ ավելի հստակ, ավելի համոզիչ և ավելի բացահայտորեն արտահայտված: Այդ նոր ուղղությունը փոխլրացումն էր: Այս տերմինը նախկինում չէր կիրառվել քաղաքական ենթատեքստում: Մա առաջին դեպքն էր: Այն որոշակի

մտածողություն, հստակ հանձնառություն և յուրահատուկ համոզմունք էր պահանջում:

Մտածողությունն այն էր, որ մենք պետք է վճռական ու բաց լինենք մեր ընկերների ու հակառակորդների հետ: Մենք հայտարարեցինք, որ պարտավորված չենք ընտրելու ընկերների միջև, որ Հայաստանը կարող է լինել այն վայրը, որտեղ Եվրոպական Միության, Ռուսաստանի ու Միացյալ Նահանգների կամ որևէ երկու ենթադրաբար մրցակից երկրների մասամբ համընկնող շահերը կարող են բավարարվել: Ավելին՝ հետամուտ լինելով մեր ազգային շահերի իրականացմանը, մենք վերահաստատեցինք, որ նրանց հակադրվող շահերը երբևէ չեն շահարկվի կամ շահագործվի՝ մեկին մյուսի դեմ հանելով: Մենք մերժեցինք վերադարձը սառըպատերազմյան մտածողությանը՝ պնդելով, որ որևէ մեկի, այդ թվում և մեծ տերությունների շահերից չի բխում վերադարձը այդ ժամանակաշրջանին: Հայաստանը հաստատականորեն հետևում էր այս մոտեցմանը հանուն մեր ապագայի ու հանուն համաշխարհային ներդաշնակության: Մենք գերադասեցինք լինել այն երկիրը, որը ուղիներ կգտնի այդ շահերը համադրելու և ոչ թե սրելու՝ կարճաժամկետ, տեղայնացված օգուտի համար:

Մենք հանձն առանք ուշադիր լինել Հայաստանին բարեկամաբար տրամադրված երկրների հանդեպ: Սա կանխարգելիչ միջոց էր՝ կամավոր համագործակցություն ընտրելու այնտեղ, որտեղ ցանկալի է, որպեսզի խուսափեինք պարտադրված գործակցությունից այնտեղ, որտեղ դա առարկելի է:

Վերջապես, որպեսզի փոխընդանուր քաղաքականությունը գործի, մենք պետք է ելնեինք այն համոզմունքից, որ ազգային շահն անքակտելի է և պետք է դիտարկվի միջնաժամկետ կամ հեռանկարային տեսանկյունից, բայց ոչ երբեք՝ կարճաժամկետ նկատառումներից: Այլ խոսքով, ավելի լայն պատկերը պետք է հաշվի առնվի:

Այսպիսով, փոխընդանուր հարելը և մեր կողմից հակադրվող, միմյանց բացառող սառըպատերազմյան հասկացություններից հրաժարումը մեզ համար դաշտ ստեղծեց: Մենք մեզ թույլ տվեցինք գործակցություն սկսել Ամերիկայի Միացյալ Նահանգների ու Ռուսաստանի հետ, կամ Եվրոպական Միության ու Իրանի հետ, կամ Ամերիկայի Միացյալ Նահանգների ու Իրանի հետ միևնույն բնագավառներում այնպես, որ շահերը չբախվեն: Սա առանցքային էր

## *Վարդան Օսկանյան*

այդ քաղաքականության հաջողության համար, և այն լավագույն դրսևորումը ստացավ անվտանգության նման բարդագույն ոլորտում:

Առանց այս քաղաքականության հնարավոր չէր լինի հանդգնել շարունակելու ռազմավարական համագործակցության ծավալումը Ռուսաստանի հետ, հանդիսանալ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության անդամ և միևնույն ժամանակ մեր հարաբերությունները ՆԱՏՕ-ի հետ հասցնել անդամակցությունից ցածր՝ հնարավոր ամենաբարձր մակարդակի: Նախկին Խորհրդային տարածքում մենք միակ երկիրն ենք, որ նման բազմաշերտ դաշնակցություններ ունի: Մենք համոզված էինք, որ այս երկու կազմակերպություններն էլ խաղաղություն ու անվտանգություն են ցանկանում, և մենք առաջ ընթացանք՝ աչքի առաջ ունենալով Հայաստանի շահը և մեծ տերությունների երկարաժամկետ շահերը:

## **ԲԱԶՄԱԿՈՂԱՎ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

Երկրորդ փոփոխությունը արտաքին քաղաքականության մոտեցումներում շեշտված ուշադրությունն էր բազմակողմ դիվանագիտության վրա: Հաշվի առնելով Հայաստանի չափերը և այն աշխարհագրական բարդությունները, որոնց նա դիմագրավում է, իմ ընտրությունն էր՝ մեր միջազգային ներգրավման հարցում քարոզել բազմակողմ մոտեցումներ:

Սա սկիզբ էր առնում նաև իմ անցյալից: Ես ծնվել ու մեծացել եմ Մերձավոր Արևելքում, խոսում եմ արաբերեն, գիտեմ այդ տարածաշրջանի ժողովուրդների պատմությունն ու սիրում եմ նրանց մշակույթը: Մովորել ու շատ եմ ճամփորդել Խորհրդային Միությունում: Ապրել, սովորել ու աշխատել եմ Սիագյալ Նահանգներում և շատ ժամանակ եմ անցկացրել Եվրոպայում: Իմ անցյալը միգրացիոն հեշտացնում էր իմ կողմից ակտիվ, բազմակողմ ներգրավման խրախուսումը. իմ համոզմունքն այնուամենայնիվ այն էր, որ այս մոտեցումն ակնհայտ ու անհրաժեշտ է Հայաստանի առջև կանգնած խնդիրներին լուծում տալու համար: Մեր հարաբերություններն առանձին երկրների հետ շատ կարևոր են, իսկ բազմակողմ դիվանագիտությունն ամրապնդում է այդ երկկողմ հարաբերությունները բազմաթիվ մայրաքաղաքներում: Մեր դեսպաններից յուրաքան-

չյուրը բազմակողմ դիվանագիտության կենտրոններում՝ Նյու Յորքում, Բրյուսելում, Ստրասբուրգում, Ժնևում, Վիեննայում և Սինսկում ամենօրյա հնարավորություն ունի աշխարհի տարբեր կողմերը ներկայացնող տասնյակ դեսպանների հետ խոսելու և տեղեկություններ փոխանակելու: Ակտիվ, բազմակողմ կապերն օգնում են ստեղծելու բարենպաստ միջավայր ու ազդեցություն, անգամ օգնում են ձևավորելու միջազգային կարծիքը:

Բազմակողմ դիվանագիտություն նշանակում է, որ պետությունն իր ազգային սահմաններից դուրս իր շահերին ու նպատակներին հետամուտ է լինում ոչ թե միայնակ, այլ ուրիշ պետությունների հետ համագործակցությամբ ու դաշնությամբ: Ոչ մի երկրի խնդիր, առավել ևս՝ Հայաստանի, չի կարող լուծվել միակողմանիորեն կամ մեկուսի: Անգամ մեծ ազգերը, երբ միայնակ են գործել, ձախողման ու հուսախաբության են հանդիպել:

Իրոք, բազմակողմ դիվանագիտությունը Հայաստանին մեծ օգուտներ է տվել ու շարունակում է տալ: Եթե մեր երկկողմ հարաբերությունները ձևավորվում են տնտեսական, քաղաքական ու աշխարհագրական իրողություններից ելնելով, մեր բազմակողմ հարաբերությունները սահմանափակվում են միայն մեր հանձնառությամբ, ստեղծագործական մոտեցմամբ, բանավեճին մասնակցելու մեր ցանկությամբ, որը հղկում է այսօրվա ու վաղվա աշխարհը:

Այսպիսով, բազմակողմ դիվանագիտության վրա շեշտադրված ուշադրության մաս էր կազմում մեր կողմից գլոբալ խնդիրներում մտադրված, հետևողական կերպով ներգրավվելու հստակ արտաքին քաղաքական նպատակը: Փոքր երկիրը, որը քիչ բան ունի առաջարկելու բնական պաշարների ու ապրանքների տեսանկյունից, կարող է կորչել միջազգային մեծ ասպարեզում: Մյուս կողմից, աշխարհի գրեթե բոլոր երկրներում հայեր են ապրում, որոնք ունեն հարուստ պատմություն ու կենսունակ մշակույթ, ինչը Հայաստանին ելակետային առավելություն է տալիս, ինչպես նաև առավել լայն խնդիրների մեջ ներգրավվելու հնարավորություն: Ելնելով այս իրողությունից, ես վստահ էի, որ միջազգային կազմակերպությունների օրակարգերում ներառված համաաշխարհային կարևորություն ներկայացնող խնդիրների լուծման գործում ակտիվորեն ներգրավված Հայաստանը, իր նեղ ազգային ու տարածաշրջանային խնդիր-

## *Վարդան Օսկանյան*

ներից զատ, կկարողանա հայեցակարգային ու կազմակերպչական ներդրում ունենալ կյանքի բարելավման գործում, և այդ Հայաստանը ի գործու կլինի դաշինքներ կնքել, միանալ դաշնակիցների, ընկերներ ու միություններ ձեռք բերել նոր հիմունքներով:

Այս հավատամքով մենք ձեռնամուխ եղանք հենց այդ օրակարգի մշակմանը: Սա էական փոփոխություն էր, և մեր շեշտադրումը բազմակողմ դիվանագիտության վրա Հայաստանը տեղափոխեց համաշխարհային հարթակ, իսկ համաշխարհային խնդիրները բերեց Հայաստան: Միջազգային կազմակերպություններում մեր դեսպանների ակտիվ ներդրումը կենսական էր այս մոտեցման համար: Նրանցից յուրաքանչյուրը հսկայական ջանք ու ստեղծագործական մոտեցում, նվիրվածություն ու ըմբռնում է դրսևորել իր առջև ծառայած դժվարին մարտահրավերներին դիմագրավելու համար:

Ձիվան Թափբյանը՝ 1998-2008 թթ. Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունում (ԵԱՀԿ) Հայաստանի մշտական ներկայացուցիչը, այն դեսպանն էր, ով մարմնավորում էր այս քաղաքականությունը: Նա իմ՝ որպես արտգործնախարարի, առաջին առաջադրումն էր նախագահին՝ դեսպան նշանակելու համար: Լինելով վերածննդի իրական դրսևորում, Ձիվանն ակադեմիական շրջանակներում, խորհրդատվական ու միջազգային հարաբերություններում իր բազմաբնույթ ու մեծ փորձառությամբ, խորն իմացությամբ, մարդկանց ու մշակույթների խորքային ըմբռնմամբ, գրեթե անմիջապես դարձավ ԵԱՀԿ համայնքի ավագ անդամ, թեև երբևէ նախկինում դիվանագիտական պաշտոն չէր զբաղեցրել: Վիեննայի ու շատ մայրաքաղաքների նրա գործընկերները զեկուցում էին իրենց մայրաքաղաքներին նրա շաբաթական ելույթների մասին, որոնցում քննարկվում էին ԵԱՀԿ բարեփոխումները, պատերազմն Իրաքում, տարածաշրջանային հակամարտությունները, կանանց ու երեխաների իրավունքները և հրատապ ցանկացած այլ հարց: Երբ նա հեռացավ ԵԱՀԿ-ից, նրան նվիրեցին իր տասը տարիների շաբաթական ելույթների հավաքածուի հինգհատորյակը: Սա բազմակողմ դիվանագիտության արդյունավետության լավագույն դրսևորումն էր:

**ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ**

Եվրաինտեգրման մեր քաղաքականությունը շարունակությունն էր նախկինում եղած գաղափարախոսության, սակայն շեշտադրման ու արագության փոփոխմամբ: Մենք շատ ջանք գործադրեցինք երեք հաստատությունների՝ Եվրոպայի խորհրդի, Եվրոպական Միության ու ՆԱՏՕ-ի հետ ինտեգրացիոն գործընթացներն արագացնելու համար:

Երբ անկախության առաջին օրերին մեր ժողովուրդն ու ղեկավարությունը շատ բնական հարց էին տալիս, թե մենք որ տարածաշրջանին ենք պատկանում, ակնհայտ պատասխանը Եվրոպան էր: Պատմականորեն, լեզվականորեն, մշակույթի առումով, կրոնական տեսանկյունից մենք եղել ու այսօր էլ մասն ենք կազմում Եվրոպայի:

Երեք կովկասյան հանրապետությունների միջև մրցակցություն էր ընթանում հնարավորինս շուտ Եվրոպայի խորհրդի անդամ դառնալու համար: Անդամակցությունը պիտի իրականություն դառնար միայն, երբ բավարարվեին նվազագույն քաղաքական ու տնտեսական չափանիշները, և հանձնառություն ստանձնվեր մնացյալ բարեփոխումների իրականացման համար: Երբ Վրաստանին ընդունեցին 1999 թ. ապրիլին, Հայաստանն ակնկալում էր հաջորդը լինել: Այնուամենայնիվ, Լեռնային Ղարաբաղի հակամարտության հարցում կողմնապահության մեղադրանքից խուսափելու համար Եվրոպայի խորհուրդը որոշեց մեր անդամակցությունը կապել Ադրբեյջանի անդամակցության հետ, թեև ընդունում էին, որ մենք շատ առաջ ենք ժողովրդավարական բարեփոխումների ճանապարհին: Այսպիսով, գործընթացը քաղաքականացվեց:

Մենք դիմել էինք 1992 թվականին: Հայաստանը Եվրոպայի խորհրդի լիիրավ անդամ դարձավ 2001 թվականին: Դա, համենայն դեպս, հաղթահարված առաջին խոչընդոտն էր: Բարելավված տնտեսական ու քաղաքական չափանիշները, ժողովրդավարությունն ու կայունությունը հիմնական պահանջներն են թե՛ Եվրոպական Միության, թե՛ ՆԱՏՕ-ի հետ ավելի խորը ինտեգրման համար: Եվրաինտեգրման գործընթացը մեծապես արագացրեց ներքին բարեփոխումների ընթացքը:

## *Վարդան Օսկանյան*

### **ԹՈՒՐՔԻԱ**

Թուրքիայի հանդեպ մեր քաղաքականությունը հիմնականում շարունակվեց: Ի վերջո, դժվար է պատկերացնել Հայաստանի մի դեկավարի, որը կարող է այլ բան ասել, քան այն, որ մենք ուզում ենք մեր բոլոր հարևանների, ներառյալ՝ Թուրքիայի հետ նորմալ հարաբերություններ ունենալ: Սա չի նշանակում, որ մենք կմոռանանք, կանտեսենք կամ կժխտենք մեր անցյալը, ինչպես Թուրքիայի կառավարությունն է անում: Նախագահ Քոչարյանը, վարչակարգի գլուխ կանգնելու առաջին տարում, Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեայի բարձրագույն ամբիոնից հնչեցրած իր ելույթում խոսեց հայոց ցեղասպանության մասին: Սա ազդարարում էր, որ մենք ցեղասպանության ճանաչումն ընդգրկել ենք մեր արտաքին քաղաքականության օրակարգում, բայց ոչ որպես Թուրքիայի հետ երկկողմ հարաբերությունների հաստատման պայման:

Մեր շեշտադրումը հաղթահարելու և հաշտեցման վրա էր, և մեր մոտեցումը ողջունվեց այլ պետությունների կողմից, որոնք լավ էին հասկանում այն բարոյական ու քաղաքական երկընտրանքը, որի առջև կանգնած էինք: Մենք բարձրաձայն արտահայտվում էինք, երբ և որտեղ պատշաճ էր ցեղասպանության մասին խոսելը, և միևնույն ժամանակ պնդում էինք, որ անհրաժեշտ է նորմալ հարաբերություններ հաստատել:

Իմ՝ արտգործնախարար եղած տարիներին դիվանագիտական հարաբերություններ այդպես էլ չձևավորվեցին: Իմ կարծիքով, ինչպես ասել են բազում առիթներով, Թուրքիան մի քանի պատմական առիթ է բաց թողել՝ ոչ միայն Հայաստանի հետ հարաբերություններ հաստատելու առումով, այլև այս տարածաշրջանում տևական խաղաղություն և շատ իրական կապեր ու համագործակցություն հաստատելու տեսանկյունից: Փոխարենը՝ Թուրքիայի տարբեր մունետիկներ մի պատճառաբանությունից մյուսն են անցնում հարաբերություններ չհաստատելու համար: Առաջինը՝ նրանք ասում են, որ Հայաստանը տարածքային պահանջներ ունի, թեև ոչ մի հայ պաշտոնյա երբեք նման հարց չի բարձրացրել և ոչ մի գործող պայմանագիր չի մերժվել կամ փոխարինվել:

Երկրորդը՝ նրանք նշում են Հայաստանի աջակցությունը ցեղասպանության ճանաչման միջազգային գործընթացներին: Բայց եթե

հայերը՝ ցեղասպանության բուն գոհերը, ժամանակակից Թուրքիայի հետ հարաբերությունները չեն պայմանավորում Օսմանյան կայսրության գործած հանցանքների ճանաչմամբ, ի՞նչ բարոյական ու քաղաքական հիմք ունի Թուրքիան ակնկալելու, որ Հայաստանը կարող է հրաժարվել իր անցյալից կամ մոռանալ այն:

Երրորդը Թուրքիայի համերաշխությունն է Ադրբեջանի հետ: Թուրքիան պնդում է, որ Ղարաբաղի հարցը պետք է շուտափույթ լուծվի, կամ, առնվազն, կարգավորման ուղղությամբ առաջընթաց արձանագրվի հոգուտ Ադրբեջանի:

Մենք բացատրել ենք, որ մեր երկկողմ հարաբերությունները երրորդ երկրի հետ հարաբերություններին ենթարկելն անիրատեսական է: Այնուհանդերձ, թուրքական կարծիքը և քաղաքականությունը մշակողները նշել են, որ այս հարցում նրանք Ադրբեջանի ողորմածությանն են հանձնված: Իսկ Ադրբեջանը չի ցանկանում Հայաստանի ու Թուրքիայի միջև հարաբերությունների բարելավում տեսնել:

Երբ ես թողեցի պաշտոնս, բոլոր իրական ու երևակայական մտահոգություններին արձագանքելու առումով թուրքական պաշտոնյաների հետ քննարկումներն ընթանում էին հետևյալի շուրջ. եթե նրանք պատրաստ են տարանջատել Հայաստան-Թուրքիա հարաբերությունները ադրբեջանական ճնշումներից, մենք պատրաստ ենք քառաբաղադրիչ մոտեցում որդեգրել և չորս քայլերն էլ իրականացնել միաժամանակ: Դրանք են՝ (ա) երկկողմ հարաբերությունների հաստատման մասին արձանագրության ստորագրում, որը (բ) հստակ նշում է յուրաքանչյուր պետության միջազգայնորեն ճանաչված ներկա սահմանները, (գ) զուգակցված սահմանների բացումով և (դ) միջկառավարական հանձնաժողովի ստեղծում, որը կքննարկի բոլոր սուր, խնդրահարույց հարցերը, որոնք առկա են երկու երկրների ու ժողովուրդների միջև: Այս փաթեթը դժվարին խնդիրներին կտա ձևով ու բովանդակությամբ ընդունելի լուծումներ և թույլ կտա տարածաշրջանին առաջ ընթանալ:

## **ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԿ**

Վերջապես, եթե փոխլրացման քաղաքականության, բազմակողմ կառույցներում ներգրավվածության, եվրախնտեգրմանը տրված

## *Վարդան Օսկանյան*

առավել մեծ շեշտադրման և Թուրքիայի հետ հարաբերությունների հարցերում նախագահ Քոչարյանի վարչակարգի վարած քաղաքականությունը նախորդի փոփոխված, ձևափոխված, կամ արագացված տարբերակն էր, ապա Ադրբեջանի հետ Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացի առնչությամբ դիրքորոշումը հստակ ու կտրուկ փոփոխության ենթարկվեց:

Նախագահ Տեր-Պետրոսյանը համոզված էր, որ մեր անվտանգության սպառնալիքների ու մեր արևելյան ու արևմտյան սահմանների փակ լինելու պատճառով տնտեսությանը, հասարակությանն ու տիրող հոգեբանությանը շարունակաբար հասցվող վնասը վտանգում էր երկրի գոյատևումը: Նա հավատացած էր, որ հնարավոր է հետաձգել Ղարաբաղի կարգավիճակի հարցը, ստանալ կայուն անվտանգության երաշխիքներ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի համար, ապահովել կապը Հայաստանի ու Ղարաբաղի միջև և Ադրբեջանին վերադարձնել Ղարաբաղից դուրս գտնվող տարածքները, որոնք հայկական վերահսկողության ներքո են: Նրա կարծիքով սա հարաբերությունները կմոտեցնեն առերևույթ նորմալ վիճակի:

Լեռնային Ղարաբաղի ղեկավարությունն ու ժողովուրդը, ինչպես և Հայաստանի բնակչության մեծամասնությունը դեմ էին դրան: Այն ժամանակ և այսօր էլ տիրապետող մտայնությունն այն էր, որ առանց երաշխիքների առ այն, որ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը պատասխանատու կլինի իր սեփական անվտանգության ու ճակատագրի համար, չի կարող որևէ մասնակի լուծում լինել: Այլ կերպ ասած, առանց Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցում հստակության, որևէ մեկը պատրաստ չէր և այսօր էլ պատրաստ չէ վերադարձնելու Լեռնային Ղարաբաղը շրջապատող, հայկական վերահսկողության տակ գտնվող տարածքները, որոնք ապահովում են Ղարաբաղի անվտանգությունը:

Սա, անշուշտ, նախագահ Քոչարյանի հաստատ համոզմունքն էր: Հակամարտության ընթացքում ղեկավարելով Լեռնային Ղարաբաղի ինքնապաշտպանական ուժերը, նա չէր պատրաստվում հանձնելու բուֆերային գոտին՝ առանց անվտանգության ու քաղաքական ամուր երաշխիքների: Տարածքները ֆիզիկական անվտանգություն էին ապահովում գետնի վրա, իսկ կարգավիճակը պետք է ապահովեր քաղաքական անվտանգությունը: Ի լրումն սրա՝ նա հավատացած էր, որ Հայաստանի պաշարները բավարար են զարգա-

ցում ապահովելու համար՝ անգամ շրջափակման պայմաններում: Ի վերջո, այս շրջափակման նպատակն էր՝ ծնկի բերել Հայաստանը, Ղարաբաղի և ցեղասպանության հարցում Հայաստանից առավելագույն զիջումների հասնել և բոլոր ուղղություններով թուլացնել մեր բանակցային դիրքերը: Հայաստանը պետք է ապացուցեր, որ դա այդպես չէ, և որ մենք չենք կասկածում մեր ուժերի վրա, որ Հայաստանի տնտեսությունն ի գործ է զարգանալու և իրապես էլ աճեց: Այն դանդաղորեն աճեց նույնիսկ 1990-ականների սկզբին և վերելք ապրեց վերջին տասնամյակում: Թուրքիան և Ադրբեջանը չէին կարող կասկածի տակ դնել մեր հաստատակամությունը: Միայն այն ժամանակ, երբ մեր հակառակորդները հասկանային, որ շրջափակումը արդյունք չի տալիս և չի տալու, նրանք կթողնեին, որ նորմալ հարաբերություններ զարգանան:

Այսպիսով, 1998 թվականը հստակ փոփոխություն մտցրեց քաղաքականության մեջ: Իշխանափոխությունից հետո մենք ժառանգեցինք 1996 թ. ԵԱՀԿ Լիսաբոնի գազաթափողովի հետևանքները, որի նախագահողը ոչ պարտադրական բնույթի հայտարարությամբ Լեռնային Ղարաբաղի ինքնորոշումը սահմանափակել էր ինքնավարությամբ Ադրբեջանի կազմում: Սա սնանկ գաղափար էր թե՛ քաղաքականապես, թե՛ ժողովրդի անվտանգության տեսանկյունից: Իմ խնդիրը կայանում էր նրանում, որպեսզի սասանեի այն իրավականությունը, որով ոգևորված Ադրբեջանը ցանկանում էր ներդնել այդ հասկացությունը: Իրոք, միջազգային հանրությունն արդեն իսկ ուներ սահմանափակ լուծման ամրապնդված ընկալում: Ընկալում, որը մասամբ արդյունք էր նախագահ Տեր-Պետրոսյանի քաղաքականության և 1996 թ. Լիսաբոնի գազաթափողովի և Տեր-Պետրոսյանի հրաժարականի միջև ընկած ժամանակահատվածում իրականացված գործողությունների:

Երկրներանքը նրանում էր, որ հայերի վստահությունն ու անվտանգության զգացողությունը կարող էր վերականգնվել միայն համապարփակ լուծմամբ, որը կարտացոլեր թե՛ հակամարտության պատճառները՝ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման ձգտումը, և թե՛ հետևանքները: Մյուս կողմից, ընդհանուր մոտեցումներն այն ժամանակ սահմանափակում էին առավելագույն կարգավիճակը Ադրբեջանի տարածքում բարձր ինքնավարությամբ: Այսպիսով, այս երկրներանքից խուսափելու համար միջազգային հան-

## *Վարդան Օսկանյան*

ընթացումը քարոզում էր փուլային լուծում, որտեղ առաջին քայլն էր լինելու ոչ թե հակամարտության պատճառի՝ կարգավիճակի, այլ հակամարտության հետևանքների՝ տարածքների ու փախստականների հարցի վրա կենտրոնացումը: Այս մասնակի մոտեցումը հայերի համար անընդունելի էր, և նախագահ Տեր-Պետրոսյանի հրաժարականը վառ ապացույցն էր այն բանի, թե որքան անընդունելի էր:

Պահանջվեցին ամիսների ակտիվ, երկկողմանի ու բազմակողմանի դիվանագիտական ջանքեր այս մտածողությանը հակահարված տալու և հասկացնելու համար, որ ընդունելի կլինի միայն համապարփակ համաձայնությունը, որը չի ստիպի Լեռնային Ղարաբաղին մնալ Ադրբեջանի կազմում: Մասնակի լուծումները, որոնք հակամարտության տարրերից յուրաքանչյուրին կանդրադառնան առանձին-առանձին, անբավարար կլինեն: Սա էր հայկական բանակցային դիրքորոշումը, որ ներկայացնում էր և՛ Հայաստանի, և՛ Լեռնային Ղարաբաղի տեսակետը: Լիսաբոնյան հայտարարության հետևանքներից մեկն էլ այն էր, որ Ադրբեջանի ներկայացուցիչները հրաժարվեցին ուղղակիորեն բանակցել Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչների հետ: Փակուղուց խուսափելու համար Հայաստանը համաձայնեց շարունակելու բանակցել Ղարաբաղի փոխարեն, հաշվի առնելով, որ նախագահ Քոչարյանն ինքը Լեռնային Ղարաբաղի ղեկավարն էր եղել և նրա բանակցային դիրքորոշման՝ հատկապես համապարփակ լուծման գաղափարի ճարտարապետը:

Անգամ երբ բացատրում էինք ոչ լիարժեք լուծումից բխող անվտանգության սպառնալիքները, մենք զգուշությամբ էինք դա անում՝ միջնորդներին ու միջազգային հանրությանը չխրտնեցնելու համար: Փոխարենը՝ մենք որդեգրեցինք ոչ ավանդական մոտեցում ու ոչ սովորական ձևակերպումներ, և քարոզում էինք, որ միջազգային հանրությունը նույնն անի նոր, բայց տևական լուծում գտնելու համար:

Մենք պայքարում էինք համադրելու առերևույթ անհամադրելի տարածքային ամբողջականության ու ինքնորոշման սկզբունքները: «Փաստացիորեն անկախ, իրավականորեն ոչ Ադրբեջանի մաս» ձևակերպումը ծնվեց այդ ջանքերից:

Մենք մերժեցինք փուլային լուծումը, որը ենթադրում էր տարածքների վերադարձ, փախստականների վերադարձ, բաց սահմաններ և անորոշ ապագա Ղարաբաղի համար:

Մենք սկսեցինք խոսել Լեռնային Ղարաբաղի ու Ադրբեջանի միջև ոչ ուղղահայաց հարաբերությունների մասին, և Լեռնային Ղարաբաղի ու Հայաստանի միջև աշխարհագրական կապի մասին: Իհարկե, անվտանգության երաշխիքները միշտ եղել են և շարունակում են լինել քննարկման առարկա, թեև ժամանակի ընթացքում ընդունելի համարվող անվտանգության ուժերի մակարդակը և տեսակները փոխվել են:

Ընդհանուր պետության համաձայնագիրը, որը միջնորդներն առաջարկեցին 1998 թ. աշնանը, այդ հաջողված ջանքերի արդյունքն էր: Այն ենթադրում էր Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի միջև հորիզոնական կապեր, Ղարաբաղի և Հայաստանի միջև ցամաքային կապ Լաչինի միջանցքով և անվտանգության երաշխիքներ: Ադրբեջանը մերժեց այդ առաջարկը, և այն թաղվեց: Դրա բովանդակությունը հետագայում հրապարակվեց:

Մենք այլ մոտեցում սկսեցինք որոնել և մեր փաստարկներում ներմուծեցինք իրավական տարրը: Մենք բացատրեցինք, որ սա պարզապես ինքնորոշում չէ, այլ ինքնորոշում այն տարածքի վրա, որի հանդեպ Ադրբեջանը չի կարող իրավական հավակնություններ ունենալ, քանի որ Լեռնային Ղարաբաղը երբեք անկախ Ադրբեջանի մաս չի կազմել: 1918-1920 թթ., երբ Ադրբեջանը, ինչպես և Հայաստանը կարճաժամկետ անկախություն ձեռք բերեց, Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի մաս չէր: 1991 թ., երբ մեր երկրներն անկախացան Խորհրդային Միության փլուզումից հետո, Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը հանրաքվե անցկացրեց խորհրդային օրենսդրության շրջանակներում և քվեարկեց Ադրբեջանից դուրս գալու օգտին: Այսպիսով, 1991 թ. նույնպես Լեռնային Ղարաբաղը անկախ Ադրբեջանի մաս չէր:

Ակտիվ դիվանագիտական ջանքերը և երկու նախագահների զարմանալիության աստիճանի համարձակությունը, հատկապես՝ Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևի կողմից, հանգեցրեցին Քի Վեսթի համաձայնագրին: Մշակվելով 2001 թ. ապրիլին՝ մեկշաբաթյա բանակցությունների արդյունքում, Ֆլորիդայի նահանգի Քի Վեսթ քաղաքում, այս փաստաթուղթը կարող էր վերջնական լուծման հանգեցնել, քանի որ բոլոր հարցերին համապարփակ կերպով էր անդրադառնում: Քի Վեսթում իր համաձայնությունը տալուց հետո, վերադառնալով Բաքու, նախագահ Ալիևը հետ կանգնեց իր հա-

## *Վարդան Ծականյան*

մաճայնությունից: Այսպիսով, Քի Վեսթի համաճայնագիրը ևս մերժվեց Ադրբեջանի կողմից:

Գրանից հետո գործընթացը մտավ փակուղի: 2003 թ. դեկտեմբերին նախագահ Հեյդար Ալիևը մահացավ: Նրա որդին ստանձնեց պետության ղեկը: Հաջորդ մեկուկես տարվա ընթացքում նա փորձեց ամրապնդել իր իշխանությունը: Որոշ ոլորտներում նա անգամ փորձեց նոր քաղաքականություն ներդնել:

2004 թ. ապրիլին Պրագայում Ադրբեջանի նոր արտգործնախարարի հետ մենք նոր ուղի սկսեցինք՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների՝ Ֆրանսիայի, Ռուսաստանի և Միացյալ Նահանգների ներկայացուցիչների ակտիվ միջնորդության շնորհիվ:

Միջազգային հանրությունը մեծ ներդրում ունեցավ նրանում, ինչը հետագայում կոչվեց Պրագայան գործընթաց: Չորս տարիների ընթացքում կայացած ավելի քան երկու տասնյակ հանդիպումների արդյունքում տարբեր ձևափոխումների ենթարկվեց հիմնական սկզբունքների մասին փաստաթուղթը: 2007 թ. նոյեմբերին Մադրիդում կայացած ԵԱՀԿ նախարարական հանդիպման ժամանակ երեք համանախագահ երկրների ամենաբարձրաստիճան դիվանագետներն ինձ ու Ադրբեջանի իմ գործընկերոջն անձամբ ներկայացրեցին այդ փաստաթղթի վերջին տարբերակը: Նրանք այն նաև պաշտոնապես հանձնեցին ԵԱՀԿ պահոցին:

Երբ ես հեռանում էի պաշտոնից, Պրագայան գործընթացը սկսվելուց չորս տարի անց, Լեռնային Ղարաբաղի բանակցային գործընթացը շրջադարձային կետում էր գտնվում: Մադրիդյան փաստաթուղթը, թեև հեռու էր կատարյալ լինելուց, մեր բազմակողմ դիվանագիտական ջանքերի արդյունքն էր: Այդ փաստաթղթում հստակորեն ամրագրվում էր Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքը: Որքան էլ Ադրբեջանը փորձի հրաժարվել կամ ժխտել, ոչինչ այլևս չի փոխի այն փաստը, որ փոխգիշումային լուծումներն իրատեսական են, կայուն և հնարավոր: Հայկական դիվանագիտությանը հաջողվել է փոխել հանրային կարծիքը և միջազգային մոտեցումները: Ամենակարևորը, մենք արձանագրեցինք փոխգիշման գնալու մեր պատրաստակամությունը՝ առանց զիջումներ անելու Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ազատ կամքի արտահայտման և անվտանգության հարցում:

Բոլորի համար սովորական է դարձել Ադրբեջանի կողմից երեք ուղղությամբ խաղալու մարտավարությունը: Հրապարակավ նրանք

ծայրահեղական ու ռազմատենչ հայտարարություններ են անում Լեռնային Ղարաբաղի համար միայն մեկ հնարավոր ապագա նախատեսելով՝ Ադրբեջանի կազմում: Փակ դռների հետևում նրանք շարունակում են բանակցել կարգավիճակի շուրջ ԵԱՀԿ Մինսկի խմբի ձևաչափով: Միաժամանակ, նրանք փորձում են Լեռնային Ղարաբաղի գործընթացը տեղափոխել ԵԱՀԿ-ից ՄԱԿ, որտեղ նրանց կարծիքով բազմաթիվ գործոններ են իրենց օգտին աշխատում՝ նրանց դաշնակցությունը Վրաստանի, Ուկրաինայի ու Մոլդովայի հետ, Իսլամական կոնֆերանս կազմակերպության անդամների աջակցությունը, Թուրքիայի և Պակիստանի անվերապահ համերաշխությունը և ազդեցությունը:

Ամենից շատ նրանց համար գրավիչ էր ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի պարզ մեծամասնության կանոնը, որտեղ քվեարկությունը հիմնված է ոչ այնքան քաղաքական և ռազմավարական ընտրությունների, այլ դաշնակցային հարաբերությունների ու պարտավորությունների վրա:

Տարիներ շարունակ մեզ հաջողվում էր դիմակայել դարաբաղյան խնդիրը ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեա տեղափոխելու և դրա շրջանակներում բանաձև ընդունելու ջանքերին, որ կարող էր հանգեցնել կայունության և շարունակական խաղաղության ձեռքբերման հնարավորության կորստին: Մենք հետաքրքրված չէինք պարզ քվեարկության արդյունքում ընդունված ձևական բնույթի բանաձևերով, որոնք ընդամենը խորհրդատվական արժեք ունեն:

Բայց 2008 թ. այլ իրավիճակ ստեղծվեց: Առաջինը Մադրիդյան փաստաթուղթն էր: Ադրբեջանի ամենաբարձրաստիճան ղիվանագետներն այդ փաստաթղթի ձևավորման անբաժան մասն են կազմել: Սակայն ԵԱՀԿ պահոցին այս փաստաթղթի հանձնմամբ, որտեղ հստակորեն ամրագրվել էր Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքը, Ադրբեջանը սկսեց ուղիներ փնտրել թե՛ փաստաթուղթը, թե՛ գործընթացը տապալելու համար: Երկրորդն այն էր, որ 2008 թվականը Կոստվոյի տարին էր: Միջազգային հանրության պատրաստակամությունը միակողմանիորեն, առանց Սերբիայի համաձայնության, ճանաչելու Կոստվոյի անկախությունը, Ադրբեջանին մտահոգվելու առիթ տվեց, և նրանք կրկին սկսեցին միջոցներ որոնել պաշտպանվելու համար այս հնարավոր մոդելից: Հատկանշական է, որ միջազգային հանրությունը նույնպես չէր ցան-

## *Վարդան Օսկանյան*

կանում Կոսովոն նախադեպ դարձնել և ուղիներ էր փնտրում ամբաստանելու համար տարածքային ամբողջականության սկզբունքը:

Եվ ի վերջո, 2008 թ. մարտի 1-ին հետընտրական անկայունությունը Հայաստանում ավարտվեց բռնությամբ: Ադրբեջանն օգտագործեց որոշակիորեն թուլացած ու շփոթված Հայաստանի իրավիճակը և մարտի 14-ին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեային ներկայացվեց մի բանաձև, որը միանշանակ արտացոլում էր Ադրբեջանի դիրքորոշումը և հակամարտության լուծման վերաբերյալ Ադրբեջանի տեսակետը՝ տեղ չթողնելով փոխզիջման համար:

Բանաձևը ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի օրակարգում ընդգրկված է արդեն չորս տարի: Յուրաքանչյուր անգամ, երբ նրանք փորձել են բանաձևը քվեարկության դնել, նրանք հաշվարկել են, որ «այո»-ների թիվն այնքան քիչ կլինի անգամ այդ ոչ պարտադրողական բնույթի փաստաթղթի համար, որ փոքր հաղթանակը ձայների չնչին քանակի նվաստացումը չի արդարացնի: 2008 թ. նրանք մտածում էին, որ Հայաստանի ներքին խնդիրները և Կոսովոյի նախադեպի հետ կապված մտահոգությունը առավել համոզիչ հիմնավորում կտան միջազգային հանրությանը ընդառաջելու Ադրբեջանի կոչին՝ սահմանափակելու Լեռնային Ղարաբաղի ժողովրդի իրավունքները: 192 երկրներից միայն 39-ը կողմ քվեարկեցին: Սակայն ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայում դա անցողիկ արդյունք է: ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրները՝ Ռուսաստանը, ԱՄՆ-ը ու Ֆրանսիան, որ սովորաբար զգուշավոր են կողմերից որևէ մեկի դիրքորոշմանն աջակցելու առումով, մերժեցին մնան փաստաթղթի նպատակը և դեմ քվեարկեցին բանաձևին: Եվրոպական Միության անդամ երկրները ձեռնպահ քվեարկեցին:

Ադրբեջանին, թվում է, մնան արդյունքը չմտահոգեց: Նրանց պետք էին բանաձևի ձևակերպումները, որքան էլ դրանք ոչ պարտադրողական բնույթի լինեին, որպեսզի փոխհատուցեն իրենց խոցելի լինելու զգացողությունը: Բանակցային գործընթացում փաստացիորեն ներգրավված դիվանագետներն ընդունում էին հակամարտության իրական պատճառները, հետևանքներն ու լուծումները՝ առաջարկելով Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքը հարգելու ընդունելի ուղիներ: Այսպիսով՝ մադրիդյան փաստաթղթի լուրջ քաղաքական արժեքը կայանում է փոխզիջումային լուծումների պաշտոնականացման մեջ, որի առանցքում Լեռնա-

յին Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքն է:

Արդեն երկար ժամանակ է, որ Լեռնային Ղարաբաղի գործընթացը շարունակվում է այսպես. բանակցային ոգով՝ մասնավոր հանդիպումներում և դիմադրության ու պատերազմի ոգով՝ հրապարակավ:

### **ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՓՅՈՒՈՔԻ ՀԵՏ**

Էական փոփոխություն գրանցվեց նաև Հայաստանի կառավարության քաղաքականության մեջ՝ սփյուռքի, հատկապես՝ վերջինիս կառույցների հանդեպ:

Հարկ է նշել, որ այդ հարաբերությունները Տեր-Պետրոսյանի վարչակարգի ժամանակ ոչ սահմանված էին, ոչ էլ՝ իրատեսական: Դա անիրական ժամանակ էր սփյուռքի համար, որի համար անկախ Հայաստանը երազ էր: Ակնկալվում էր, որ Հայաստանի Հանրապետությունը և նրա ղեկավարությունը որպես կանոն պիտի արտացոլեին կայուն ու զարգացած երկրներում ապրող սփյուռքի բոլոր հույսերն ու ակնկալիքները: Հայաստանի համար, մյուս կողմից, սա շատ բարդ քաղաքական ու տնտեսական ընտրանքի, չձևավորված քաղաքական հաստատությունների, մեծ կարիքների ու անգո պաշարների շրջան էր: Արդարացի կլինե՞ր նշել, որ յուրաքանչյուրն անիրական սպասելիքներ ունե՞ր մյուսից: Բայց արդարացի կլինի ասել նաև, որ անգամ իրական ակնկալիքները միմյանցից, որոնք կարող էին բավարարվել, չբավարարվեցին:

Հակառակը: Հայաստանում իրենց շարունակությունը գտան սփյուռքի հակադրություններն ու կողմնակալությունը: Հայ հեղափոխական դաշնակցությունը (ՀՅԴ), որը հեռացված էր Խորհրդային Հայաստանի կյանքից, մտավ նորանկախ հանրապետություն՝ բնատուր իրավունքի զգացումով: Բախվելով Տեր-Պետրոսյանի վարչակարգի հետ, դեռևս լիարժեք չուսումնասիրված ու չբացատրված մի շարք պատճառներով, ՀՅԴ-ի գործունեությունը կասեցվեց Հայաստանում, իսկ նրա ղեկավարները հեռացվեցին, ոմանք՝ վտարվելով, ոմանք էլ՝ բանտարկվելով: Սփյուռքի ոչ դաշնակցական համայնքները դարձան հանրապետության նոր ընկերները:

## *Վարդան Օսկանյան*

Սա էր այդ շրջանի իրավիճակը: Երբ նախագահ Քոչարյանը ստանձնեց իշխանությունը, նա հետ շրջեց ՀՅԴ-ի ղեկավարության վերաբերյալ կայացված որոշումները, լիազորեց նրա գործունեությունը, և շատ շուտով ՀՅԴ-ն անգամ դարձավ կառավարող կոալիցիայի անդամ: Թեև հաջորդող տասնամյակում սա հանգեցրեց ավելի բաց, նորմալ հարաբերությունների Հայաստանի ու սփյուռքի վերնախավի միջև, նրանք, որոնք նախկին իշխանություններին սատարել էին կառավարություն-դաշնակցություն լարվածության ժամանակահատվածում, որոշակի դժգոհություն արտահայտեցին իրենց երբեմնի արտոնյալ դիրքերի նվազեցման պատճառով:

Առանց որևէ հատուկ հարաբերություն առաջարկելու կամ ակնկալելու՝ Քոչարյանի օրոք ջանք գործադրվեց սփյուռքին կառուցակարգային կերպով ներգրավելու: Սա իրականացվեց ցուցադրական, հրապարակային, որոշակիորեն խորհրդանշական գործողություններով, ինչպիսիք էին սփյուռքի երեք զանգվածային խորհրդածողովները: Թեև նման հավաքների արդյունավետությունն ու արժեքը սահմանափակ է, դրանք առաջին քայլերն էին մեծապես չկազմակերպված ու չհամակարգված սփյուռքի հետ առավել նպատակային ու օգտաշատ հարաբերություններ հաստատելու պահանջված գործընթացում:

Ուղիղ և արդյունավետ հարաբերությունների երկու տեսակ կար: Մեկը՝ ԱՄՆ-ում ու Եվրոպայում հայկական լոբբիստական կազմակերպությունների հետ հարաբերություններն էին, որոնց հետ մեր և հատկապես՝ իմ կապերը շատ բաց ու օգտակար են եղել: Մյուսը՝ մեր հարաբերություններն էին առանձին հայերի կամ հայկական կազմակերպությունների հետ, որոնք հատուկ օրակարգ ունեին, իրենց աշխատանքում որոշակի օժանդակության կարիք էին զգում, և որոնց առջև Հայաստանի արտաքին գործերի նախարարության դռները բաց էին:

Այսպիսի անկեղծ ու արդյունավետ համագործակցության լավագույն օրինակն էր գործարար-բարեգործ Քրրք Քրրքորյանի հետ մեր աշխատանքը: Այն սկսվեց 1998 թ. նրա հետ իմ առաջին հանդիպումից, երբ ես ներկայացնում էի մի կառավարություն, որը երախտապարտ էր նրան անցյալի իր բարեգործական գործունեության համար և պաշտոնապես խնդրում էր նրան արդեն իր մասնակցություն-

նր բերել Հայաստանի զարգացման գործում և առաջարկում կառավարության կողմից թափանցիկության ու համագործակցության ամենաբարձր աստիճան: Պրն. Բրքորյանի անկեղծ ու հեռանկարային ներգրավվածությունն այդ ժամանակից ի վեր դարձել է Հայաստանի պատմության մասը:

**ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Մույն հավաքածուն պետք է դիտարկվի այս միջազգային ու ներքին համատեքստերում: Այդ ելույթներից շատերը հնչել են արտասահմանյան գիտահետազոտական ու ակադեմիական հաստատություններում, ինչպես նաև հայկական կազմակերպություններում: Նրանք իրենց ազդեցությունն են ունենում համաշխարհային գործընթացների վրա, և ինձ համար նրանք եղել են շատ օգտակար ատյաններ՝ հարցերին հնչեղություն տալու համար, հատկապես հաշվի առնելով այն, որ նրանց օրակարգերը, որպես կանոն, արտացոլում են միջազգային կազմակերպությունների օրակարգերը:

Ելույթների մեծ մասը եղել են, այնուամենայնիվ, ի պաշտոնե՝ մոտ տասնյակ համաշխարհային կազմակերպությունների տարբեր մարմինների պարբերական պաշտոնական հավաքներին՝ Միավորված ազգերի կազմակերպությունում (ՄԱԿ), Եվրոպայի խորհրդում (ԵԽ), Եվրոպայում անվտանգության ու համագործակցության կազմակերպությունում (ԵԱՀԿ), Հյուսիսատլանտյան դաշինքում (ՆԱՏՕ) և Սևծովյան տնտեսական համագործակցությունում (ՄՕՏՀ): Երկու այլ կազմակերպություն կա, որոնց հանդիպումներին ես կանոնավոր կերպով մասնակցել եմ, բայց որոնց ձևաչափերը պաշտոնական ելույթների հնարավորություն չեն տալիս՝ Անկախ Պետությունների Համագործակցությունը (ԱՊՀ) և Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը (ՀԱՊԿ):

Այս բոլոր կազմակերպություններն էլ պատերազմի արդյունք են. կամ թե՛ երկրորդ համաշխարհայինի, կամ սառը պատերազմի, կամ էլ հետսառըպատերազմյան աշխարհակարգի: Յուրաքանչյուրն իր դիմամիկան ունի, տարբերվում են իրենց մանդատներով և պատասխանատվությունների շրջանակներով, տարբեր վարչական ու էվո-

## *Վարդան Օսկանյան*

լուցիոն գործընթացներով: Բայց յուրաքանչյուրի համար էլ ողջունելի է իրենց անդամների հետևողական մասնակցությունը աշխարհի խնդիրներին լուծումներ գտնելու հարցում, և բոլորն էլ ընթանում են լուրջ ինստիտուցիոնալ բարեփոխումների ճանապարհով:

Ես այս ելույթների մեծ մասն ունեցել եմ տարեկան հավաքների ժամանակ, երբ երկրի արտաքին գերատեսչության ղեկավարը հանդես է գալիս՝ արծարծելով ազգային ու միջազգային քաղաքական թեմաներ: ՄԱԿ-ն այս տարեկան հավաքները կոչում է գլխավոր ասամբլեայի ընդհանուր քննարկումներ, ԵԱՀԿ-ն կոչում է նախարարական խորհուրդներ: ԵԽ-ում, ԱՊՀ-ում, ՀԱՊԿ-ում և ՍԾՏՀ-ում դրանք նախարարական հանդիպումներ են: ՆԱՏՕ-ի Եվրատլանտյան գործընկերության խորհուրդը (ԵԱԳԽ) տարեկան մեկ անգամ նախարարական հավաք է գումարում ՆԱՏՕ-ի անդամ պետությունների մասնակցությամբ:

Նրանցից յուրաքանչյուրի կենտրոնակայանում Հայաստանը մշտական ներկայացուցչություն ունի: Արտաքին գործերի նախարարությունում բաժիններ ու պաշտոնյաներ կան այս կազմակերպություններից յուրաքանչյուրի համար: Այս տարեկան հանդիպումներից յուրաքանչյուրը մեր դեսպանների ու ներկայացուցիչների մեկ տարվա աշխատանքի գագաթնակետն է: Այդ իսկ պատճառով, երբ Հայաստանի արտաքին գերատեսչության ղեկավարը ամբիոն է բարձրանում նշելու, բացատրելու, պաշտպանելու, կասկածի տակ առնելու, կամ սատարելու համաշխարհային խնդիրներն ու միջազգային քաղաքականությունը, նրա ելույթների բովանդակությունը Հայաստանի ամբողջ արտաքին գերատեսչության համադրված ջանքերի արդյունք է:

Դա նաև Հայաստանի խորհրդարանի, ինչպես նաև քաղաքացիական հասարակության և այս միջազգային կազմակերպությունների հետ և դրանցում աշխատող այլոց հետ սերտ համագործակցության արդյունք է: Եվրոպայի խորհրդի, ԵԱՀԿ-ի և ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովներում մեր պատվիրակությունների անդամներն ու ղեկավարները այս քաղաքականության կիրառման մաս են: Չլինելով որևէ քաղաքական կուսակցության անդամ, աշխատելով երկու նախագահների վարչակազմերում, ես իմ կապերն օգտագործել եմ մեր գործունեության արդյունավետության բարձրացման համար:

Միևնույն ժամանակ այս տարեկան հավաքները մեզ առիթ են

տալիս աշխարհին ներկայացնելու մեր կատարողականը ներքին իրավիճակի, ներառյալ՝ ժողովրդավարության կերտման առումով, օրենսդրական բարեփոխումները, մարդու իրավունքների և այլ հիմնարար ազատությունների ընկալման ու պաշտպանության հարցում գրանցված առաջընթացը, ինչպես նաև՝ տնտեսության վերականգնումը:

Եվ վերջապես, այս կազմակերպությունները միջավայր են ստեղծում, որտեղ գաղափարները դառնում են ուղեցույցներ, քաղաքականություն, չափորոշիչներ ու նորմեր: Մեզ համար նրանք նաև շրջանակ ու ուղեցույց են եղել և կարգապահություն են ներմուծել: Այլ խոսքերով, այս կազմակերպություններում մեր անդամությունը մեզ շատ բան է սովորեցրել, և հենց դրան էր դա միտված: Ես հաճախ եմ ասել, հետադարձ հայացք նետելով, որ, առանց այս կազմակերպությունների կողմից տրված ներգրավման ու տեսլականի, մենք անկասկած այլ զարգացում կապրեինք:

#### **ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

Եվրոպայի խորհուրդն այն բնական վայրն էր, որտեղից պիտի սկսվեր մեր եվրահիմնադրումը: Սա կազմակերպություն է, որ ստեղծվել է 1949 թ.՝ անդամ երկրների համար ընդհանուր արժեքների ու սկզբունքների խթանման համար: Տեղակայված է Ստրասբուրգում՝ ֆրանս-գերմանական նախկին կռվախնձոր հանդիսացող վայրում, ցույց տալու համար, որ այն կարող է վերափոխվել հարևանների համայնքի:

Երևանում դրա խորհրդանշական իմաստը լավ են հասկանում: 1980-ականների վերջին և 1990-ականների սկզբին այս կազմակերպության մանդատը վերահաստատվեց, երբ նորանկախ պետություններ ի հայտ եկան՝ պատրաստ միանալու եվրոպական կառույցներին: Այս կազմակերպությունն առաջարկեց գործիքներ, որոնք միտված էին խթանելու ու զարգացնելու մարդու հիմնարար իրավունքները, ժողովրդավարությունն ու օրենքի գերակայությունը հասարակության մեջ, հատկապես՝ պատերազմ տեսած, սահմանափակող կենտրոնացված իշխանությամբ թուլացած և փլուզված տնտեսությունից ավիրված հասարակություններում:

## *Վարդան Օսկանյան*

Փորձություններով լի մոտ տասը տարի շարունակ Եվրոպայի խորհրդին միանալու գործընթացը մեզ միջոցներ ընձեռեց Հայաստանի հաստատությունները, օրենսդրությունն ու հասարակությունը ժողովրդավարացնելու համար: Այն մեր եվրոպականացման հարցում արագացուցչի դեր ունեցավ:

Իսկ ես՝ իմ հերթին, օգտագործում էի յուրաքանչյուր հնարավորություն՝ նշելու մեր արագ ու հաջողված բարեփոխումների մասին և խրախուսելու Եվրոպայի խորհրդին մեզ դատելու ըստ մեր արժանիքների՝ տարանջատելով մեր անդամակցության գործընթացը Ադրբեջանի գործընթացներից: Անդամակցությունից առաջ արված գրեթե յուրաքանչյուր ելույթում ես ուղիներ էի փնտրում շեշտելու, որ Եվրոպայի խորհրդին անդամակցությունը չի նշանակում, որ մենք հակամարտության խնդիրները Ստրասբուրգ կտեղափոխենք, փոխարենը՝ կօգտագործենք ավելի լայն համագործակցային շրջանակներում Եվրոպայի խորհրդի կողմից տրված հնարավորությունները հակամարտության կարգավորմանը հասնելու համար և կսկսենք տարածաշրջանային մակարդակում ևս համագործակցել հակամարտության կարգավորման ճանապարհին: Այսպիսով, անդամակցության ճանապարհին ես շեշտում էի մեր բարեփոխումները, դեպի Եվրոպա տանող մեր ուրույն ուղին և այդ ուղու կարևորությունը: Հնարավորություն կար նաև խոսելու Եվրոպայի խորհրդի կողմից ակտիվ աջակցություն վայելող ոլորտների՝ մշակույթի, գիտության, մարդու իրավունքների ու մամուլի մասին:

Անդամակցությունից հետո իմ ելույթները դարձան մի տեսակ հաշվետվություն ներքին տնտեսական ու քաղաքական առաջընթացի մասին, ինչպես նաև Թուրքիայի հետ մեր հարաբերությունների ու Լեռնային Ղարաբաղի հակամարտության շուրջ իրավիճակի վերջին զարգացումների ներկայացում: Եվրոպայի խորհրդի անդամների միջև ակնկալվում է բարիդրացիական հարաբերությունների առկայություն, և Թուրքիա-Հայաստան հարաբերությունները բացառություն չեն կարող լինել: Միևնույն ժամանակ Լեռնային Ղարաբաղի հակամարտության հարցում խաղաղ կարգավորման հասնելը պայմաններից մեկն էր, որը ներկայացվեց թե՛ Հայաստանին, թե՛ Ադրբեջանին անդամակցության ժամանակ: Հետևաբար, մեր արտաքին քաղաքականության այս դրսևորումները պետք է որ Ստրասբուրգի մեր գործընկերների առանձնակի հետաքրքրությանն արժանանային:

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆԱՏՕ-Ն**

Եվրահանձնարարությունը եռաշերտ գործընթաց է: Եվրոպայի խորհրդի պարագայում մենք ձգտում էինք անդամակցության ու հասանք մեր նպատակին: Եվրոպական Միության ու ՆԱՏՕ-ի դեպքում, խիստ իրատեսական նկատառումներից ելնելով, մենք հաստատուն կերպով քարոզում էինք ինտեգրացիոն գործընթացի օգտին: Եվրոպական Միության անդամակցությունը ենթադրում է տնտեսական զարգացման և ինստիտուցիոնալ ստանդարտացման նվազագույն մակարդակ, ինչին մենք փորձում ենք հասնել, թեև դա մեզ համար դեռևս շատ հեռավոր նպատակ է: Այնուհանդերձ, անդամակցությունից զատ կան ինստիտուցիոնալ հարաբերությունների բազմաթիվ հնարավորություններ տնտեսական հարաբերությունների, քաղաքական համագործակցության համար, և Հայաստանն ամեն ինչ անում է այդ գործընթացից օգտվելու համար՝ առանց անդամակցության մասին վաղաժամ հայտարարություններ անելու:

Եվրոպական Միության հետ մենք 1996 թ. ստորագրեցինք Գործընկերության ու համագործակցության մասին համաձայնագիր, որին հաջորդեցին 2006 թ. ստորագրված Եվրոպական հարևանության քաղաքականությունը և նրա գործողությունների ծրագիրը:

Եվրոպական Միության ղեկավարության հետ տարեկան հանդիպումները Հարավային Կովկասի երեք արտգործնախարարների հետ աշխատանքային ճաշերի ձևաչափով է անցկացվում, որում որևէ մեկը պաշտոնական ելույթներ չի հնչեցնում: Մենք պատասխանում էինք ծագած հարցերին, պարզաբանում անվտանգության խնդիրները, քննարկում հակամարտությունների բանակցային իրավիճակը, Եվրոպական Միության դերը հակամարտությունների կարգավորման գործընթացում և տարածաշրջանային համագործակցությունը: Պաշտոնական ելույթներ չկային նաև դրանց հետևող երկկողմ հանդիպումների ժամանակ: Դրանցում մենք անցնում էինք Հայաստան-Եվրոպական Միություն համագործակցության բավականին ծավալուն օրակարգով, որը ներառում էր ամեն ինչ՝ սկսած միջուկային էներգիայից մինչև ներքին քաղաքականությունն ու բարեփոխումները: Երկու կողմերն էլ քննարկում ու գնահատում էին ընթացքը համագործակցության համաձայնագրի յուրաքանչյուր ուղղությամբ: Այսպիսով, Հայաստան-Եվրոպական Միություն ինստիտուցիոնալ

## *Վարդան Օսկանյան*

հարաբերությունները հետևում էին մանրամասնորեն որոշված ուղեցույցի: Մեկ տասնամյակ անց, ունենալով Եվրոպական Միության որակական նոր գործիքը՝ Եվրոպական հարևանության քաղաքականությունը, մենք մշակեցինք գործողությունների ծրագիր, որն ընդգրկում էր տնտեսական ինտեգրացիոն գործընթացները և առաջարկում ավելի մեծ հնարավորություններ Եվրոպական Միության հետ հարաբերությունների խորացման համար:

Իրավիճակը գրեթե նույնն է ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունների դեպքում: Որպես ՆԱՏՕ-ի Եվրատլանտյան գործընկերության խորհրդի անդամ, մենք ներգրավվեցինք մի շարք ծրագրերի մեջ՝ սկսած Գործընկերություն հանուն խաղաղության ծրագրից, որը բարձրացվեց մինչև ներկայիս՝ Անհատական գործընկերության գործողությունների ծրագիրը, ինչը ՆԱՏՕ-ի անդամակցությունից ցածր՝ հնարավոր ամենաբարձր մակարդակն է: Փոխլրացման մեր քաղաքականությունը թույլ տվեց մեզ հասնելու հարաբերությունների այս մակարդակին՝ միաժամանակ պահպանելով մեր անդամակցությունը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը:

ՆԱՏՕ-ի Եվրատլանտյան գործընկերության խորհրդի նախարարական հանդիպումներին երբեմն միայն օրակարգի կետերից որևէ մեկի վերաբերյալ ելույթով հանդես գալու առիթ էր լինում: Ընդհանուր առմամբ, ձևաչափն այնպիսին էր, որ հանդիպմանը մասնակցող նախարարները պետք է օրակարգում ընդգրկված կետերի վերաբերյալ իրենց մեկնաբանությունները ներկայացնեին կամ ընթացիկ խնդիրներին անդրադառնային:

Այսպիսով, եվրաինտեգրման այս համապարփակ գործընթացը, գլոբալ փոփոխությունների համատեքստում, արտացոլվում է այս գրքում բերված ելույթներում:

### **ԱՆԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

Փոխլրացման քաղաքականությունը մեր արտաքին հարաբերությունների հիմքում է ընկած հենց այն պատճառով, որ ամենատար-

բեր միություններն ու անդամակցությունները ոչ միայն բնական են, այլև պարտադիր մեր պատմությունն ու աշխարհագրությունն ունեցող երկրի համար: Այսպիսով, մենք հավատացած ենք, որ մեր եվրախնամեզման գործընթացը լրացնում է, այլ ոչ թե, ինչպես պնդում են ոմանք, հակադրվում է Հայաստանի անդամությանը Անկախ պետությունների համագործակցությանը և Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը:

Ի տարբերություն մյուս նախկին խորհրդային հանրապետությունների, Հայաստանում հակախորհրդային տրամադրությունները չփոխարինվեցին հակառուսական տրամադրություններով: Մեզ համար բարեկամական հարաբերությունները Ռուսաստանի հետ նախորդում էին Խորհրդային Միությանն ու շարունակվեցին նրանից հետո: Այս պատմությունը չէր կարող անտեսվել: Մեր աշխարհագրությունը մոտ ժամանակներում փոփոխության չէր ենթարկվելու: Մենք ԱՊՀ-ի ստեղծումը համարեցինք հեռատեսական և անխուսափելի: Այն կապերը, որ առաջարկում էր այդ կազմակերպությունը, օգտակար էին կարծր, կենտրոնացված, խորհրդային համակարգից լիարժեք անկախության ու ինքնիշխանության անցնելու համար: Հին տնտեսական կապերի և քաղաքական հարակցությունների կարիքը սկզբնական շրջանում շատ էր զգացվում մեր անկախության գոյատևման իրավունքն ապահովելու համար:

Իսկապես, հետադարձ հայացք նետելով, կարող ենք ասել, որ ԱՊՀ-ն մեզանից շատերի համար ապահովեց սահուն անցում՝ խուսափելով Հարավսլավիայի փլուզման նման պայթյունավտանգ ճակատագրից: Կամ՝ գրեթե խուսափելով:

Ի վերջո, ԱՊՀ-ում շատ ճեղքեր կան: Վրաստանի, Ուկրաինայի, Ադրբեջանի ու Մոլդովայի կողմից ստեղծված միությունը, ինչպես նաև հակամարտություններն այս երկրների մեծամասնության ու Ռուսաստանի միջև, իհարկե, սրել են իրավիճակը: Այնուհանդերձ, ԱՊՀ-ն շարունակում է հովանի լինել բազմակողմ համագործակցության համար՝ թեև ոչ բոլոր հարցերի առումով: Ավելին, այն հնարավորություն է տալիս ունենալու արդյունավետ, օգտաշատ, կանոնավոր ու բազմաշերտ երկկողմ ներգրավվածություն: ԱՊՀ նախարարական հանդիպումներին ևս պաշտոնական ելույթներ չկան: Փոխարենը քննարկումը ծավալվում է օրակարգի կետերի շուրջ:

## *Վարդան Ծղակյան*

Տնտեսական ու քաղաքական խնդիրների հետ միասին անվտանգության հարցերը կարևոր տեղ էին զբաղեցնում ԱՊՀ օրակարգում: Այսպիսով, պետք էր ակնկալել նույն աշխարհագրական տարածքն ընդգրկող անվտանգության կազմակերպության առաջացումը: Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության ստեղծումը նաև բավարարում էր Ռուսաստանի սեփական անվտանգության շահերը և Կովկասում ավելի մեծ ներգրավում ունենալու վերջինիս պահանջը: Թեև նախատեսվում էր, որ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը կդառնա ԱՊՀ-ի անվտանգության թևը, Ռուսաստանի ու ԱՊՀ անդամ երկրներից շատերի միջև հիմնավոր տարբերությունները հեռու պահեցին այդ երկրներին ՀԱՊԿ անդամակցությունից: Դրանում ընդգրկվեցին միայն Ղազախստանը, Ղրղզստանը, Տաջիկստանը, Ուզբեկստանը, Բելառուսը, Ռուսաստանն ու Հայաստանը:

Հայաստանի համար Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանն անդամակցությունը ցանկալի էր, թեև մենք արդեն իսկ ունեինք երկկողմ անվտանգության մեխանիզմներ Ռուսաստանի հետ: Հաշվի առնելով անվտանգության հարցում մեր խիստ մեծ զգայունությունը, մեր խոցելիությունը, մեր համոզմունքը, որ անվտանգության մեխանիզմների առումով «որքան շատ՝ այնքան լավ», ՀԱՊԿ-ն առաջարկում էր պաշտպանության մի լրացուցիչ շերտ, հատկապես այն բանից հետո, երբ ընդունվեց այն դրույթը, ըստ որի՝ մեկի հանդեպ ոտնձգությունը ոտնձգություն է բոլորի հանդեպ: Այսպիսով, մեր ներգրավվածությունը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունում շարունակում է կարևոր լինել, թեև այն իր արտացոլումը չի գտել այս գրքում, քանի որ մասնակցությունն այդ հանդիպումներին ևս պաշտոնական ելույթների ձևով չի եղել:

### **ՄԵՎԾՈՎՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

Ինչպես Անկախ պետությունների համագործակցությունն ու Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպու-

թյունն են դիտարկվում որպես տարածաշրջանային կազմակերպություններ, այնպես էլ Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպությունը (ՄՃՏՀ), որը ստեղծվեց հենց այն նպատակով, որպեսզի միասնական առյուծ ղառնա տարածաշրջանային դերակատարներից բոլորի համար: Չկա տնտեսական համագործակցության որևէ այլ կազմակերպություն, բացառությամբ ՄԱԿ-ի, որում Թուրքիան, Ռուսաստանը, Ուկրաինան, Մոլդովան, Ալբանիան, Հունաստանը, Սերբիան, Ռումինիան, Բուլղարիան, ինչպես նաև հարավկովկասյան երեք պետությունները՝ Հայաստանը, Վրաստանն ու Ադրբեջանը, բոլորն էլ ներկայացված լինեն: Այս 12-ի միջև ընդհանուր հետաքրքրություն ու քաղաքական շահ ներկայացնող հարցերը շատ են, կան նաև լուրջ հակասություններ: Խոստացվում էր, որ առաջինը գերակա կլինի վերջինի հանդեպ և տնտեսական համագործակցության միջոցով կնվազեցվեն տարածաշրջանային քաղաքական ու անվտանգության սպառնալիքները: Սա կարևոր էր ԱՄՆ-ի ու Եվրոպական Միության համար, որոնց վրա անկայունությունն ու բախումները տարածաշրջանում անմիջական ազդեցություն կունենային:

Հայաստանը միացավ այս կազմակերպությանը հենց այդ պատճառով: Սա առյուծ էր ապահովում տնտեսական, տրանսպորտային, մշակութային ու այլ կարգի համագործակցության համար, հատկապես Թուրքիայի ու անգամ Ադրբեջանի հետ, որպեսզի ստեղծվեր մի միջավայր, որտեղ ավելի բարդ քաղաքական խնդիրները կարող էին լուծումներ գտնել: Փոխարենը՝ հակառակը պատահեց: Թուրքիան ու Ադրբեջանը կառչեցին առկա քաղաքական տարբերություններին՝ որևէ տեսակի համագործակցությանը խոչընդոտելու համար: Նմանատիպ խնդիրներ հառնեցին ՄՃՏՀ այլ ծրագրերի պարագայում ևս: Այսպիսով, տարածաշրջանային կայունության խնդիրն անպատասխան մնաց:

Այսպիսի տարածաշրջանային խճճվածության լույսի ներքո ՄՃՏՀ-ի զարգացման հարցում փակուղային իրավիճակը իմ հայտարարություններից շատերի հիմքում էին: Ի վերջո Հայաստանը միայնակ մնաց ՄՃՏՀ-ի նախնական տեսլականը քարոզելու գործում:

## *Վարդան Օսկանյան*

### **ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՒ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

Եվրոպայում անվտանգության ու համագործակցության կազմակերպությունը (ԵԱՀԿ) սառըպատերազմյան արարում է, որը վերածվեց համագործակցության տրանսատլանտյան աստյանի, որն էլ իր գիրկն առավ Խորհրդային Միության բեկորներին: Անդամակցությունը թե՛ եվրասիական, թե՛ հյուսիսամերիկյան անդամների համար գործում է կոնսենսուսի սկզբունքով. փաստացիորեն 56 անդամ երկրներից յուրաքանչյուրին վետոյի իրավունք է վերապահվում: Եվ վերջապես, սա այն կազմակերպությունն էր, որ միջազգայնացրեց Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը, 1992 թ. ընդունելով Մինսկի կոնֆերանսի վերաբերյալ որոշումը, որը հանձնարարում էր հանդիպում գումարել՝ որոշելու Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը և կարգավորելու հակամարտությունը մեկընդմիջտ: Կոնֆերանսն այդպես էլ չիրավիրվեց: Փոխարենը՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի նախագահությունը աճեց՝ սկզբում մեկից հասնելով երկուսի, հետո էլ՝ երեքի, որոնք փորձում էին լուծում գտնել Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի ու հակամարտության հետևանքների հարցերում:

ԵԱՀԿ ներգրավվածությունը Հայաստանում կարևոր է շատ ոլորտներում, որոնք Լեռնային Ղարաբաղի հակամարտության միջնորդությունից դուրս են գտնվում: Հայաստանի համար, որտեղ անվտանգությունն ու կայունությունը կախված են ազատ զարգացման հնարավորություններից, բնական պաշարների հանդեպ հարգանքից, պատրաստված քաղաքացիական ոստիկանական ու պաշտպանության ուժերից, ԵԱՀԿ-ի ակտիվ ու ընդգրկուն ծրագրերն անփոխարինելի են եղել: Պատճառներից մեկը ԵԱՀԿ-ի կողմից անվտանգության սահմանումն է: Այն անվտանգությունը ոչ ավանդական կերպով է դիտարկում՝ շեշտը դնելով ապահովության ու կայունության տնտեսական ու սոցիալական հարթությունների վրա: Այս կազմակերպությունը ձգտում է ոչ միայն անհատական անվտանգությունն ապահովել, այլև հավաքական անվտանգությունը, և ոչ թե ռազմական հարթության վրա, այլ ուժեղացնելով սոցիալական հարթությունը: Այլ խոսքերով՝ անդամ պետություններն ընդունել են, որ աղքատության բոլոր տեսակները՝ շուկայում, արժեքների ու սկզբունքների մասով, նույնպես կարող են վտանգ ներկայացնել հասարակության համար:

Սա անվտանգության խորքայնորեն տարբերվող, առավել կայուն ու հեռատեսական մոտեցում է այնպիսի դարաշրջանում, երբ անհատները, հասարակություններն ու երկրները պետք է դիմագրավեն էներգետիկական, բնապահպանական, սոցիալական ու քաղաքական լուրջ սպառնալիքների, որոնք բխում են ինչպես բացահայտ թշնամիներից, այնպես էլ՝ անտեսանելի հակառակորդներից:

Եվրոպայում անվտանգության ու համագործակցության կազմակերպության մտահոգվածությունը իր անդամ պետություններում բարելավված ընտրական գործընթացներով նշանակել է Ժողովրդավարական հաստատությունների ու մարդու իրավունքների գրասենյակի ներկայություն Հայաստանում, որտեղ նրանք աշխատել են կառավարության ու քաղաքացիական հասարակության հետ՝ բարելավելու ընտրական օրենսգիրքը և դիտարկելու, գնահատելու ու առաջարկություններ տալու ընտրական գործընթացների բարեփոխումների ուղղությամբ: Նրանք այդպես են վարվում բոլոր երկրներում, որոնք հրավեր են ուղարկում նրանց: Հայաստանը հրավեր է ուղարկել անկախությունից ի վեր, և գնահատականները, թեև երբեք բավարար չեն եղել, այնուհանդերձ բարելավում են արձանագրել, մատնանշել են խնդիրները և ուղղություն տվել փոփոխություններին:

Մեր՝ ԵԱՀԿ-ում ներգրավված այս ուղղությունները, տարածաշրջանային, հատկապես՝ Թուրքիայի հետ հարաբերությունների ամփոփումների հետ մեկտեղ, կազմել են մեկ տասնամյակի ընթացքում ԵԱՀԿ տարեկան նախարարական հանդիպումներում իմ հնչեցրած ելույթների առանցքը: Վերջին տարիներին այդ ելույթները հղումներ են պարունակել կարևորություն ներկայացնող մեկ այլ թեմայի՝ ԵԱՀԿ բարեփոխումներին: Հայաստանը կարող է հպարտանալ կազմակերպության վերակենդանացման, այն այսօրվա աշխարհի պահանջներին համապատասխանեցնելու և իր բոլոր անդամ պետությունների դերն ուժեղացնելու հարցերում իր ներդրման համար: 1994 թ. մենք խոչընդոտեցինք մի կարևոր որոշման ընդունմանը, որով վերանում էր կոնսենսուսի կարգը: Մենք օգտագործեցինք հենց այդ նույն կարգը այն պահպանելու համար, և այսօր կոնսենսուսի պահպանման օգտին անդամ երկրների անվերապահ դիրքորոշումը ցույց է տալիս, որ ժամանակին մենք չենք սխալվել:

Որքան էլ ծավալում ու զանազանեցված է եղել ու մնում մեր ԵԱՀԿ օրակարգը, այս ատյանում հնչեցրած իմ ելույթների կիզակետում եղել

## *Վարդան Օսկանյան*

Է Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը: Բացի տարեկան նախարարական հանդիպումներից, ես ելույթներ եմ ունեցել նաև ԵԱՀԿ մշտական խորհրդի առջև՝ Վիեննայում, որի հավաքները տեղի էին ունենում ամեն շաբաթ՝ անդամ երկրների դեսպանների մասնակցությամբ: Ես ցանկանում էի և զգում էի նրանց տեղեկացված պահելու կարիքը: Հավատացած էի, որ կարևոր է արտացոլել բանակցությունների ոգին ու ուղղությունը՝ առանց բովանդակության մանրամասները բացահայտելու, քանի որ, ինչպես հայտնի է բանակցողներին, ոչինչ համաձայնեցված չէ, քանի դեռ ամեն ինչ չի համաձայնեցված: Նաև այն, որ այս հակամարտությունն այնքան խրթին է ու վիճահարույց, որ տևական կարգավորման համար պահանջում է բարդ ու ոչ ավանդական լուծում: Ես աշխատել եմ այն այդ ուղղությամբ տանել և փորձել եմ դա բացատրել իմ ելույթներում: Առանց գաղտնիքները բացահայտելու, առանց հակադրվելու էթիկային ու ըմբռնումներին, կարևոր էր բովանդակություն ու նյութ տալ՝ մամուլի, փորձագետների ու տարբեր կողմերի մեկնաբանություններից ու շահարկումներից անկախ:

ԵԱՀԿ ելույթները հատկապես արտացոլում էին այն մտածողությունը, որ կար Լեռնային Ղարաբաղի բանակցությունների տարբեր փուլերում և ցույց էին տալիս վերապահման ու լավատեսության մեր հիմքերը:

## **ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

Անդամությունը ՄԱԿ-ում ու նրա տարբեր մարմիններում պետականության ամենամեծ արտահայտությունն է: Հայաստանն ակտիվ է եղել ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայում, Միջուկային Էներգիայի միջազգային գործակալությունում (որտեղ մեր մասնակցությունն ու ակտիվությունը հիմնականում մեր տարածքում ատոմակայան ունենալու արդյունք է), Տնտեսական ու սոցիալական խորհրդում, ինչպես նաև Մարդու իրավունքների հանձնաժողովում: Մենք ընտրվել ենք վերջին երկուսի անդամ և հավակնում ենք անդամության ՄԱԿ-ի անվտանգության խորհրդում հաջորդ տասնամյակում: Այսպիսի ներգրավումն իր արտացոլումն է գտել ՄԱԿ-ի տարբեր մարմինների տարեկան հանդիպումներին ու ասամբլեաներին մեր ելույթներում, հատկապես՝ Մարդու իրավունքների հանձնաժողովում, (որը խորհրդի վերածվեց

2007 թ.) և Յունեսկոյում, ինչպես նաև մի քանի հատուկ նստաշրջաններում:

Մեր ելույթները Մարդու իրավունքների հանձնաժողովում առանձնակի արժեք ունեին, քանի որ մենք այդ հանձնաժողովի անդամ ենք ընտրվել երկու անգամ: Սա առանձնահատուկ պատիվ էր, ինչպես նաև բարդ պատասխանատվություն: Ամեն անգամ, երբ բարդ քվեարկություն էր սպասվում որևէ անդամ պետության մարդու իրավունքների իրավիճակի վերաբերյալ, մեզ համար դա նշանակում էր հավատարիմ մնալ մեր քաղաքականությանը և սկզբունքներին, քանի որ մեր ձայնը ստանալու համար շատերն էին պայքարում: Այդ ձայնն իր հիմքում, ըստ էության, սակարկության գործիք է, բայց նաև ավելին՝ քվեարկությունը ցույց է տալիս պետության պատկանելությունը տարբեր քաղաքական հարակցությունների ու խնդիրների: Իրանի, Կուբայի ու Պաղեստինի դեպքերում հաճախ անհրաժեշտ էր լինում ընտրություն կատարել բարեկամների ու բարդ դիրքորոշումների միջև:

Անդամությունը հանձնաժողովին երկու ազգային հանձնառության հանգեցրեց մեզ: Առաջինը մեր սեփական տունը կարգի բերելն էր, մեր սեփական մարդու իրավունքներին ու խնդիրներին և ժողովրդավարական զարգացումների հանդեպ առավել ուշադիր լինելն էր: Երկրորդը՝ ամբողջ աշխարհում ցեղասպանության երևույթի քաղաքական իրականությունը հիշեցնելու բարոյական պարտավորությունն էր: Այդ պատճառով մենք նախաձեռնեցինք Ցեղասպանության կոմիտեի 50-ամյակին նվիրված բանաձև, և ես հանդես եկա Օսլոյի մի անցիտական ճամբարների փակման 60-ամյակին նվիրված նստաշրջանին: Մենք օգտագործեցինք այդ առիթները՝ հենվելով ցեղասպանության մեր փորձի վրա՝ շեշտելու շարունակվող վտանգն ու սպառնալիքները, և տեղեկացման ու ճանաչման կոչ անելով:

Ինչպես ՄԱԿ-ն է միջազգային օրինականության ու պատկանելության գերագույն մարմնավորումը, այնպես էլ ՄԱԿ-ի բարձր ամբիոնից ելույթ ունենալն ամենամեծ հնարավորությունն է խոսելու՝ լաված լինելու համար, դիմելու աշխարհին, խոսելու համամարդկային ճշմարտությունների ու անհատական երազանքների մասին: Յուրաքանչյուր ելույթը փորձություն է, մեր կարողությունների քննություն՝ տասնյակ երկրների բարձր մակարդակի ներկայացուցիչների ուշադրությունը գրավելու համար, որոնցից մի քանիսը հետաքրքրված են Հայաստանով, մյուսները՝ տարածաշրջանով կամ

## *Վարդան Օսկանյան*

տարածաշրջանի հակամարտություններով, այլոք՝ հետխորհրդային ժողովրդավարական ու տնտեսական զարգացման գործընթացներով, ուրիշներն էլ՝ մեր հարևաններ Ռուսաստանով, Թուրքիայով ու Իրանով: Ոմանք էլ անկեղծորեն ամենն ին հետաքրքրված չեն Հայաստանով: Անհրաժեշտ է յուրաքանչյուր առիթ օգտագործել՝ լսելի լինելու բոլորին այն խնդիրներով, որ միայն մերն են, ինչպես նաև նրանցով, որ բոլորիս են վերաբերում:

Հետևաբար, մեր ներքին նվաճումների մասին զեկուցելուց բացի, Հայաստանի ելույթն ամեն տարի ներառել է մեր դիրքորոշումները միջազգային օրակարգի հարցերի շուրջ: Սա արվել է միջազգային հանրությանը ցույց տալու համար, որ մենք նույնպես ենթարկվում ենք միջազգային զարգացումների ազդեցությանը և կարծիք ունենք այդ հետևանքային հարցերի վերաբերյալ: Մեր ներքին լսարանի համար դա նշան էր, որ Հայաստանը պետք է շարունակաբար ձգտի ներկայություն ապահովել իր սահմաններից դուրս:

Տարիներ շարունակ ես խոսել եմ հակամարտությունների մասին, որոնք մոտ են մեզ քարտեզի վրա, ինչպես նաև նրանց, որ մոտ են մեր սրտին, ինչպիսիք են՝ իսրայելա-պաղեստինյան հակամարտությունը և Լիբանանի ռմբակոծումը: Երբ Արևելյան Թիմորն անկախություն ձեռք բերեց, և Խաղաղ օվկիանոսի փոքր պետությունները միացան ՄԱԿ-ի ընտանիքին, մենք հստակորեն նշեցինք, որ միայն աշխարհագրությունն է բաժանում մեր երազանքները: Ելույթի վերջում, ըստ ՄԱԿ-ի ավանդույթի, ելույթ ունեցողը կանգնում է բեմի ետևում, և նրան են մոտենում ովքեր ցանկանում են նկատառումներ փոխանակել ելույթի վերաբերյալ: Գնահատանքի խոսքերը, որ լսել եմ այդ երկրների ներկայացուցիչներից, ցույց էին տալիս, թե որքան կարևոր է կամուրջներ կառուցելն ու համաշխարհային անարդարության դեմ առավել արդյունավետ պայքար մղելը:

Դարձուրդ (և դրանից առաջ Ռուանդան), աշխարհի օրակարգում է վերջին մի քանի տարիներին: Մեզ համար այն հսկայական, ողբերգալի նշանակություն է ունեցել, և ես դա նշել եմ յուրաքանչյուր առիթով: Նշելով հայոց ցեղասպանության տարելիցները, պետք է նկատել, որ այն թե՛ անհատներիս, թե՛ ազգի համար դեռևս չամոքված վերքի է նմանվում: Նոր ցեղասպանությունների համատեքստում, պետությունների կողմից կրկնվող փորձերում՝ լուծելու քաղաքական տարբերությունները սեփական ժողովրդի հանդեպ

ծրագրված, կազմակերպված բռնության գործադրմամբ, ինչը փաստացիորեն պետական ահաբեկչություն է, ակնհայտ է դառնում, որ ժամանակակից ազգերը դեռևս հրաժարվում են իրենց պարտականությունից. այն է, ՄԱԿ-ի լեզվով ասած, իրականացնել ցեղասպանության կանխումը և դրանից բնակչությանը պաշտպանելու պետության պատասխանատվությունը: Ավելին, նրանց թույլատրված է քաբնվել մերժման պետական քաղաքականության թիկունքում:

Այլ հարցեր, ինչպիսիք են զինաթափումը, սպառնալուծությունների չտարածումը, գլոբալիզացիան, կամ անվտանգությունը, հատկապես 2001 թ. սեպտեմբերից հետո, ևս արծարծվել են, սակայն հաճախ հարցի, այլ ոչ թե պատասխանի ձևով: Հայաստանի համար սեպտեմբերի 11-ն ավելին էր, քան շրջադարձային կետ: Եթե այլոց համար այս հարձակումները նախանշեցին փոփոխություն անվտանգության քաղաքականության մեջ, մեզ համար այդ օրը փոխեց հարակցություններն ու հանդուրժողականությունը, մեծապես նվազեցրեց մեր սեփական քաղաքական տարբերակները: Այդ ժամանակվանից սկսած մենք աշխատել ենք գործընկերների հետ, որոնց տարածաշրջանային ու գլոբալ խնդիրների հանդեպ դիտանկյուններն ու ընկալումները փոխվել են: Այսպիսով, մենք ստիպված էինք արտահայտել և ցուցադրել մեր հավատարմությունն ու նվիրվածությունը անվտանգության շատ իրական մտահոգությունների առումով՝ անգամ երբ փորձում էինք նավարկել բարեկամների, հարևանների ու դաշնակիցների միջև, որոնք տարամետ հեռանկարներ, փորձառություններ ու վտանգների ընկալում ունեին:

Շատ են օրինակները: Հայաստանն ու Իրանը հրաշալի հարաբերություններ ունեն: Արդյո՞ք Հայաստանն ընկալվում է որպես երկակի օգտագործման նյութերի համար տարանցիկ երկիր: Ռուսաստանի կողմից մարտահրավեր նետվեց Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին պայմանագրին: Ինչպիսի՞ ազդեցություն կունենա դա Հայաստանի վրա, որտեղ տեղակայված են ռուսական բազաները, և որը անվտանգության լուրջ սպառնալիքներ ունի Ադրբեյջանի կողմից: Ի նկատի ունենալով զենքերի ձեռքբերման հարցում հավասարակշռությունն ու թափանցիկությունը, ինչպե՞ս պետք է Հայաստանը արձագանքի Ադրբեյջանի կողմից Ղարաբաղի վերաբերյալ հնչող անհիմն մեղադրանքներին, երբ դրանով շեղում է ուշադրությունն իր իսկ խախտումներից: Այս և բազում

## *Վարդան Օսկանյան*

այլ հարցեր, որոնք ծագել են մեր մտքում, արծարծվել են հրապարակայնորեն:

Իհարկե, Հայաստանի հարաբերությունները տարածաշրջանում և Թուրքիայի հետ եղել են միջազգային հանրության մեծագույն հետաքրքրության առարկան: Թեև կարելի է ասել, որ քիչ առաջխաղացում է եղել այդ հարաբերություններում, ես զգում էի կարիքը հստակեցնելու, որ Հայաստանը պատրաստ է առաջ ընթանալ առանց նախապայմանների, անգամ երբ ես հիշեցնում էի աշխարհին ցեղասպանության թողած քաղաքական ու հոգեբանական վերքերի մասին, որոնք սպիանալու հնարավորություն չեն ունեցել:

Միևնույն է, առանց կասկածի իսկ նշույլի կարելի է արձանագրել, որ իմ ելույթներում առյուծի բաժինը հասել է Լեռնային Ղարաբաղին: Եվ սա այն պատճառով, որ այս հակամարտությունը, նրա հետևանքները և ձգձգվող ազդեցությունը հսկայական նշանակություն ունեն մեր ժողովրդի համար: Եվ դա հնարավոր չէ գերազնահատել:

Կա նաև ՄԱԿ-ի կառույցի հետաքրքրվածությունը Լեռնային Ղարաբաղի հակամարտության հանդեպ, որը ծագում է 1992 թ. և 1993 թ. ընդունված Անվտանգության խորհրդի չորս բանաձևերից, որոնցում, ի շարս այլ հարցերի, Հայաստանի վրա պարտավորություն է դրվում օգտագործելու իր ազդեցությունը Լեռնային Ղարաբաղի տեղական ուժերի վրա՝ ռազմական գործողությունները դադարեցնելու և դրա հետևանքները վերացնելու համար: Անշուշտ ռազմական փուլը իմ պաշտոնը ստանձնելուց շատ առաջ էր ավարտվել, բայց հակամարտության՝ նոր փուլերով անցնելուն զուգահեռ, բանակցային կանոնների և էթիկայի շրջանակներում գործընթացը հնարավորինս բացատրելը նույնքան էական է եղել Միավորված ազգերի կազմակերպությունում, որքան և Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունում:

Իրավունք չունենալով ամբողջ ճշմարտությունն ասել, իմ ելույթներում երբեք կեղծիք չի եղել և երբևէ դիտավորյալ թյուրիմացության մեջ չեմ զցել: Տողատակերը կարդալու ունակություն ունեցողները, նրանք, ովքեր ներգրավված էին գործընթացի մեջ և ուղերձների էին սպասում, կարող էին ըմբռնել քննարկումների էությունն ու Հայաստանի հակումները:

## ԱՆԱՎԱՐՏ ՏԱՄՆԱՄՅԱԿ

Այս ելույթներում արտացոլվել է ոչ միայն Լեռնային Ղարաբաղի բանակցային գործընթացի, այլև մեր ամբողջ արտաքին քաղաքականության էվոլյուցիան: Ընթերցողը կարող է հետևել համաշխարհային իրադարձությունների ձևափոխությանը անգամ օգտագործված արտահայտությունների միջոցով: 1999 թ. Կոստվո և Արևելյան Թիմորը ասելով հասկանում էինք պատերազմ և բռնություն: 2002 թ. Արևելյան Թիմորը սկսեց հաջողված ինքնորոշման շարժում մարմնավորել: Կոստվոն 2007 թ. վերածվեց երկշեղք սրի, դառնալով ինքնորոշման հաջողված փորձ, որ կիրառվել էր միջազգային հանրության պարտադրանքով:

Այս ելույթներն ուղղված էին աշխարհին, սակայն ակնհայտ էր նրանց հանդեպ մեր ժողովրդի հետաքրքրությունը: Թեև մեր սեփական բնակչության համար հարցազրույցների, բանավեճերի, համասարաններում և մամուլի ակումբներում ելույթների միջոցով խոսելը նույնպես իմ աշխատանքի մասն էր, և ես այդ հնարավորություններից հաճախ և սիրով օգտվում էի, կարևոր էր նաև, որ միջազգային ելույթները արձագանք ստանան հայրենիքում: Ի վերջո, նրանք որչափ մեր միջազգային հարաբերությունների, նույնչափ էլ Հայաստանի ու մեր զարգացման մասին էին: Առանց գերագնահատելու կամ չափազանցներու հայաստանյան իրողությունները, ես երբեք չեմ երկմտել մեր քաղաքական, տնտեսական և սոցիալական զարգացումը հնարավորինս բարենպաստ պատկերելու հարցում:

Հայաստանի համար վստահությունն ու հեռատեսությունը կենսական են: Սեփական ձեռքբերումներն ու ներուժը թերագնահատելը կնշանակեր արժեքավոր պաշար վատնել: Սա այն պատգամն է, որ ես բերելու եմ, շարունակելով անել այն ամենը, ինչ կարող եմ՝ որպես քաղաքացիական հասարակության անդամ, հատկապես քաղաքական գործընթացների միջոցով խորացնելու Հայաստանի բարգավաճումն ու հարատև կայունությունը և մեր ժողովրդի արդար ու արժանապատիվ կյանքին նպաստելու ուղղությամբ աշխատելու համար: Ինձ և մեր ողջ սերնդին այս հնարավորությունն ունենալու բախտ է վիճակվել:

Վարդան Օսկանյան  
Օգոստոս 2008 թ.

*Վարդան Օսկանյան*